

Եվրոպական միության «Երևանի պետական համալսարանում
Եվրոպական և միջազգային իրավունքի և եվրոպական իրավունքի և
ինտեգրման կենտրոնի ստեղծում և ԳՀՀ մասին
իրագելության բարձրացում» ծրագիր Հայաստանում

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ և ԻՆՏԵԳՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Եվրոպական բարձրագույն կրթական համակարգի
ինտեգրումը և Հայաստանի մասնակցությունն այդ
գործընթացներին

Վերլուծություն



Ծրագիրը ֆինանսավորվում է
Եվրոպական միության կողմից



Ծրագիրն իրականացվում է
GOPA Խորհրդատվական
ընկերության կողմից

Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոն



Գրիգոր Հայրապետյան, Վարդան Բաղդասարյան

Եվրոպական բարձրագույն կրթական համակարգի ինտեգրումը և Հայաստանի մասնակցությունն այդ գործընթացներին

Վերլուծություն

Սույն հրատարակումն իրականացվել է Եվրոպական միության աջակցությամբ: Հրատարակման բովանդակության համար պատասխանատու է միայն Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնը և այն որևէ կերպ չի արտահայտում Եվրոպական միության տեսակետները:



Ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

GOPA
WORLDWIDE CONSULTANTS

Ծրագիրն իրականացվում է GOPA Խորհրդատվական ընկերության կողմից

Երևան 2008

Բովանդակություն

Ներածություն.....	3
1. Բարձրագույն կրթական համակարգի գլոբալացումը.....	4
2. Բարձրագույն կրթության համապատասխանեցումն ու ինտեգրումն եվրոպական երկրներում.....	8
3. Եվրոպական Միության կրթական համակարգը.....	12
4. Փարիզի և Լիսաբոնի հռչակագրերն ու ԱՀԿ փոխհարաբերությունը.....	21
5. Բոլոնիայի գործընթացը և Հայաստանի մասնակցությունն այդ գործընթացին.....	24
5.1 Հայաստանի բարձրագույն կրթական համակարգը և դրա ինտեգրումը եվրոպականին.....	26
5.2 Բոլոնիայի գործընթացի գնահատումն ուսանողների հայացքով.....	31
Եզրակացություն.....	44
Օգտագործված գրականություն.....	56

Ներածություն

ԵՄ քաղաքականությունների փոփոխության ուսումնասիրությունները հիմնականում անտեսել են բարձրագույն կրթության հիմնախնդիրները: Այնուամենայնիվ, վերջին շրջանում հետազոտությունների մեջ որոշակի փոփոխության նշաններ են նկատվում հոգուտ բարձրագույն կրթության հիմնախնդիրների¹: Առկա է այնպիսի գրականության պակաս, որտեղ բարձրագույն կրթության մեջ եվրոպականացման գործընթացները կոնիտարկվեին համեմատական քաղաքականության առումով: Պակասում է նաև այնպիսի գրականությունը, որը կօգներ համեմատել ներկայիս բարձրագույն կրթության քաղաքականության զարգացումները նախկին քաղաքականությունների հետ եվրոպական մակարդակում:

Եվրոպական Հանձնաժողովը պարբերաբար հիշեցնում է, որ բարձրագույն կրթությունը երբեք այսքան բարձր մակարդակով չի քննարկվել եվրոպական կառավարման մարմինների օրակարգերում²: Լիսաբոնի ռազմավարության համաձայն՝ նախապատվություն է տրվել ավելի ուժեղ ԲՈՒՀ-ական համակարգին «Գիտելիքի Եվրոպա» ստեղծելու համար: Համալսարաններն իրենց վիթխարի գիտական ռեսուրսներով կարող են խթանել տեղական և տարածաշրջանային տնտեսությունների զարգացմանը և ընդլայնել գիտելիքի վրա հիմնված տնտեսության հնարավորությունները:

Սակայն ոչ միայն ԵՄ անդամ երկրներն են համալսարանները դիտարկում որպես ռազմավարական ռեսուրսներ: 1999թ.-ից ի վեր՝ Բոլոնիայի հռչակագիրը ստորագրելուց հետո «ավելի ընդարձակ» Եվրոպայի կառավարությունները (որը ձգվում է արևելք մինչև Ռուսաստան և Ադրբեջան) «հիանալի» համաձայնագրի մասնակիցներ են, որը ապահովում է դրանց բարձրագույն կրթական համակարգերի տարածաշրջանային ինտեգրում: Այս բոլոր երկրները ցանկանում են բարձրացնել իրենց ազգային կրթական համակարգի որակը: Ավելին, դրանցից շատերը ցանկանում են ներգրավել լավագույն օտարերկրյա ուսանողների և գիտնականների: Այս գործընթացում բոլոր մասնակից երկրները համոզված են, որ կհասնեն իրենց նպատակներին՝ համագործակցելով և մրցակցելով Բարձրագույն կրթության

¹ Bleiklie (2005), Musselin (2005), Gornitzka and Olsen (2006)

² Figel, 2006; European Commission, 2003, 2005, 2006

Եվրոպական տարածքում, որը բնութագրվում է որոշակի ընդհանրական առանձնահատկություններով:

Ինչպե՞ս և ինչու՞ է Բարձրագույն կրթության եվրոպական քաղաքականությունը զարգացել և ընդարձակվել: Իրականում Եվրոպական ընկերակցությունը նախքան 1970թ. հետաքրքրություն չի ցուցաբերել բարձրագույն կրթության հանդեպ: Բարձրագույն կրթության նկատմամբ հետաքրքրությունը նկատելի դարձավ 1971թ., երբ մասնակից երկրների կրթության նախարարներն առաջին անգամ հանդիպեցին և համագործակցության որոշում ընդունեցին, և հետագայում 1974-76թթ., երբ կրթության նախարարները ձեռնարկեցին առաջին քայլերը Erasmus (ուսանողների շարժունության ապահովում) ծրագրի ստեղծման համար: Սակայն բարձրագույն կրթության ոլորտում այդպես էլ հետագոտական հետաքրքրություն չառաջացավ մինչև 1980-ական թթ.:

Գլոբալիզացիան մեծ ազդեցություն է ունեցել և շարունակում է ունենալ կրթական համակարգի և դրա կառավարման վրա: Ինչպես նշում է Սկլեյրը, կապիտալիզմը մեծ հաջողությունների հասավ՝ բիզնես միջավայր բերելով սոցիալական կյանքի շատ ոլորտներ, ստեղծելով սոցիալական ինստիտուտներ (օրինակ՝ բիզնես ուղղվածություն ունեցող դպրոցներ, համալսարաններ, հիվանդանոցներ և այլն)³: Այս ինստիտուտների բիզնես ուղղվածությունը դրսևորում է արդյունավետության ավելի ագրեսիվ մոտեցում (մեկ կետից մյուսին անցնելու համար լավագույն մեթոդի կիրառում):

1. Բարձրագույն կրթական համակարգի գլոբալացումը

Ներկա պայմաններում կրթությունը մասնավորապես բարձրագույն կրթությունը, դարձել է շատ կարևոր ապրանք ամբողջ աշխարհում: Այսօր Եվրոպան ներգրավում է ավելի քիչ ոչ եվրոպացի ուսանողներ, քան ԱՄՆ: Այսպես ԱՄՆ-ում սովորող ասիական ծագում ունեցող ուսանողների թիվն ավելի քան երկու անգամ գերազանցում է Եվրոպայում սովորող ասիական ուսանողների թվին: Ավելին, այսօր Եվրոպայում կրթություն են ստանում 27 հազ. ամերիկացի ուսանող, իսկ ԱՄՆ-ում՝ ավելի քան 52 հազ. եվրոպացի ուսանող⁴: Համեմատության համար նշենք, որ 2001թ. այդ ցուցանիշները համապատասխանաբար կազմում էին 23,705 և 80000⁵: Ինչպես

³ Sklair, L. (2001) "The Transnational Capitalist Class", Oxford: Blackwell.

⁴ OECD, Education at a Glance 2007, Table C3.8


⁵ OECD, 2001, Table C3.5

նկատում ենք, ԱՄՆ-ում սովորող եվրոպացի ուսանողների թիվը ներկայումս գրեթե երկու անգամ գերազանցում է Եվրոպայում սովորող ամերիկացի ուսանողների թվին: Այդ պատճառով Բոլոնիայի գործընթացի քննարկումներում բազմիցս նշվել է, որ եվրոպական բարձրագույն կրթական համակարգի և համալսարանների կողմից տրամադրվող կրթական աստիճանների տարբերությունն այն հիմնական պատճառներից մեկն է, որը խոչընդոտում է օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացին:

Մյուս հաճախ չնշվող, սակայն անժխտելի գործոնը դասընթացների լեզուն է: Հնարավորությունը սովորել անգլերենով շատ գրավիչ կարող է լինել: Այսպես, չնայած այն հանգամանքին, որ Մեծ Բրիտանիան ոչ ԵՄ ուսանողներից զանձում է ավելի շատ ուսման վճար, քան մյուս եվրոպական երկրները, այն դեռ շարունակում է մնալ ԱՄՆ-ից հետո աշխարհի երկրորդ խոշորագույն «կրթություն» արտահանող երկիր:

Կրթական համակարգն իր կնիքն է թողում նաև գիտահետազոտական ոլորտում, որտեղ նույնպես Եվրոպան զիջում է ԱՄՆ-ին: Այսպես Գ-ժանկար 1-ում բերված տվյալները փաստում են, որ Եվրոպան պետք է ձեռնարկի հատուկ գործողություններ բարձրագույն կրթության և գիտահետազոտական աշխատանքների ոլորտում, եթե ձգտում է առնվազն հավասար մրցակցության մեջ մնալ ԱՄՆ-ի հետ:

Գժանկար 1. 1900-2000թթ. ընկած ժամանակահատվածում Նոբելյան մրցանակ ստացած երկրների բաժինը (%)



Աղբյուր: www.nobel.se

Ընդհանուր առմամբ ուսանողների շարժունության հոսքերը հիմնականում բացատրվում են երկրների և տարածաշրջանների միջև պատմական, քաղաքական և մշակութային հարաբերություններով: Օտարերկրյա պահանջարկը կենտրոնացած է

անգլերեն, գերմաներեն և ֆրանսերեն լեզուներով առաջարկվող կրթության ծառայությունների վրա: Օրինակի համար, Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (Organization for Economic Cooperation and Development, OECD) երկրների շրջանակներում օտարերկրյա ուսանողների 80% բաժին է ընկնում ԱՄՆ-ին, Մեծ Բրիտանիային, Գերմանիային, Ֆրանսիային և Ավստրալիային:

Համաձայն Պավլովսկու՝ կան հինգ գործոններ, որոնցով էլ պայմանավորվում է ԱՄՆ առավելությունը եվրոպական համալսարանների նկատմամբ⁶.

- արդյունավետ և արհեստավարժ կառավարում,
- անձնակազմի գիտական և ակադեմիական անձնակազմի անկախության բարձր աստիճան,
- ֆինանսական և կազմակերպչական կայունություն,
- ակադեմիական այնպիսի միջավայր, որտեղ գիտնականների և ուսանողների փոխհարաբերությունների արդյունքում ստեղծվում են յուրահատուկ հարաբերություններ և բնութագիր,
- արտաքին միջավայրի հետ փոխկապակցվածություն, մասնավորապես տնտեսության մակարդակով:

Այսպիսով ԵՄ շրջանակներում ուսանողների ներքին փոխանակման ծրագրերը զգալի կարող են բարելավել ԵՄ կրթական ծրագրերը: Ամբողջ աշխարհի արտասահմանյան ուսանողների գրեթե կեսը սովորում են Եվրոպայում, սակայն դրանից ավելի քան կեսը հենց Եվրոպայից են:

Կրթական շուկայի վերազգայնացման գործընթաց: Բարձրագույն կրթական համակարգի արագ միջազգայնացման գործընթացը մեծ դեր է ունենում կրթական շուկայի վերազգայնացման գործում: Միջազգային կրթությունը հաճախ կազմակերպվում է հետևյալ սխեմայով. միջազգային կրթություն առաջարկող համալսարանը թիրախային երկրի բարձրագույն կրթական ինստիտուտի կամ այլ կրթական հաստատության հետ հաստատում է համագործակցություն և համատեղ հիմնադրում կամ առանձին կրթական ծրագիր, կամ լիարժեք կրթական հաստատություն: Ընդ որում միջազգային կրթություն տրամադրող համալսարանը սովորաբար պատասխանատու է կրթության պլանավորման և մասամբ դրա իրականացման համար: Կրթության որակի պատասխանատվությունը ընկած է միջազգային կրթություն տրամադրող համալսարանի վրա, իսկ ընդունող կողմը

⁶ Krzysztof Pawlowski (2004) "Rediscovering higher education in Europe", Studies on Higher Education

իրականացնում է կրթության կազմակերպման գործընթացը: Սա փաստորեն իրենից ներկայացնում է կրթության ֆրենչայզինգ⁷:

Եվրոպայում բրիտանական համալսարանները ընդլայնել են իրենց սահմաններից դուրս առաջարկվող կրթական աստիճան շնորհող բարձրագույն կրթության ծրագրերը: Օրինակ՝ Ֆինլանդիայում, Գերմանիայում և Հոլանդիայում բրիտանական համալսարանների գործընկերներն իրավունք չունեն ինքնուրույն շնորհել մագիստրոսի աստիճան: Որոշ երկրներում միջազգային կրթությունը դիտարկվում է որպես ոչ միանշանակ մոտեցում, քանի որ երբեմն դա հակասում է թիրախային երկրի կրթական նպատակներին, իսկ կրթության որակը մնում է վիճելի: Միևնույն ժամանակ, այլ երկրներում, օրինակ՝ Իսպանիայում, միջազգային կրթության ընդլայնմանը շատ դրական են վերաբերվում:

Եվրոպայում բարձրագույն կրթությունը երկար ժամանակ համարվել է հանրային ապրանք/ծառայություն, որը տրամադրվում էր կառավարության կամ այլ պետական կառավարման մարմինների կողմից: Այս ավանդույթը ներկայումս տրանսֆորմացիայի է ենթարկվում մասնավորապես Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում: Արևմտյան Եվրոպայում համալսարանների ֆինանսական անկախությունը հատկապես Մեծ Բրիտանիայում և Նիդեռլանդներում շատ ավելի վաղ է արտահայտված, քան մյուս երկրներում: Մյուս կողմից Արևմտյան Եվրոպայում (օրինակ՝ Գերմանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում և այլն) բարձրագույն կրթության մասնավոր ինստիտուտները լայն թափով սկսեցին տարածվել և զարգանալ 1990-ական թվականների վերջին: Բարձրագույն կրթության մասնավոր ինստիտուտներից շատերը կենտրոնացան այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են՝ գործարարությունը, կառավարումը/վարչարարությունը և իրավունքը:

Բարձրագույն կրթության որակի գնահատումը: Քանի որ կրթական շուկան զարգանում և դրա կոմերցիոն ուղղվածությունն էլ ավելի է խորանում, ապա դրա որակի գնահատումը կանգ է առնում նոր մարտահրավերների առաջ: 1990-ական թվականներին գրեթե բոլոր Արևմտյան Եվրոպայի երկրներում պետական կառավարման մարմինների կողմից բարձրագույն կրթական ինստիտուտների նկատմամբ վերահսկումը զգալի թուլացավ: Հանրային կառավարման մարմիններն այլևս չեն պլանավորում և կարգավորում կրթության պարունակությունը, իսկ համալսարանները լրիվ ազատ են իրենց որոշումների ընդունման գործընթացում: Այս

⁷ Արտոնագրման հատուկ ձև է, երբ հայտնի ապրանքանիշ ունեցող ընկերությունը մեկ այլ ընկերության տրամադրում է իրավունք այդ ապրանքանիշն օգտագործել իր ապրանքների համար, սակայն միևնույն ժամանակ՝ իրեն իրավունք է վերապահում վերահսկել ապրանքի որակը, բաղադրությունը և այլն:

զարգացումների և կրթության կոմերցիոն ուղղվածության արագ զարգացման պատճառով ուշադրությունն առավելապես կենտրոնացել է կրթության որակի վրա:

OECD-ն հատուկ ցուցանիշներ է մշակել կրթական քաղաքականությունների համեմատման համար, իսկ ԵՄ-ում այդ գործընթացը ներկայումս ընթացքի մեջ է: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում քաղաքական, սոցիալական և տնտեսական զարգացումների արդյունքում ստեղծվեցին բազմաթիվ մասնավոր կրթական ինստիտուտներ: Դրանց մի մասը ստեղծվեցին արտասահմանյան բարձրագույն կրթական ինստիտուտների կողմից: Այդ ծրագրերի մոնիտորինգի համար մշակվեցին նոր մեթոդներ: Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի շատ երկրներ կրթության նվազագույն ստանդարտներ ապահովելու համար մշակել են հավատարմագրման համակարգեր:

Բոլոնիայի գործընթացից ի վեր Եվրոպայում հավատարմագրման վերաբերյալ լայն քննարկումներ և բանավեճեր են ընթանում: Մի շարք երկրներում անհրաժեշտություն է առաջացել մշակել ազգային և վերազգային հավատարմագրման համակարգեր՝ նպատակ ունենալով ավելի մրցունակ դարձնել եվրոպական բարձրագույն կրթական համակարգը: Մյուս կողմից շատ եվրոպական երկրներ ներմուծել են ամերիկյան հավատարմագրման համակարգը: Այստեղից հարց է առաջանում, արդո՞ք բարձրագույն կրթությունը Եվրոպայում զարգանում է՝ բավարարելու եվրոպական, թե՞ ամերիկյան կարիքները և ստանդարտները: Այստեղ հարկ է նշել, որ Բոլոնիայի գործընթացի վերաբերյալ ավելի մանրամասն կներկայցվի չորրորդ բաժնում:

2. Բարձրագույն կրթության համապատասխանեցումն ու ինտեգրումն եվրոպական երկրներում

Վերջին տարիներին գլոբալացման զարգացման հետ մեկտեղ Եվրոպայում սկսել են ուշադրություն դարձնել բարձրագույն կրթության վրա: Սակայն այս ոլորտում դեռևս զոյություն չունի միասնական ռազմավարություն: Այսպես, քանի որ տարբեր երկրների համար կան գլոբալացման տարբեր ըմբռնումներ և մարտահրավերներ, ապա կան նաև բարձրագույն կրթական քաղաքականության պատասխանատվության տարբեր մակարդակներ (եվրոպական, ազգային, ինստիտուցիոնալ): Օրինակ՝ Եվրոպական Միության, մասնավորապես Եվրոպական Հանձնաժողովի համար կարելի է առանձնացնել բարձրագույն կրթության տարբեր կողմեր և փուլեր, մինչդեռ առանձին երկրների արձագանքը տվյալ քաղաքականության նկատմամբ կարող է

ամբողջովին այլ լինել⁸: Այսպես, մի շարք եվրոպական երկրներում ազգային բարձրագույն կրթական համակարգի միջազգային մրցունակությունը բարձրացնելու համար էքստենսիվ կերպով կիրառվում են բազմաթիվ ծրագրեր: Այս ենթատեքստում Գերմանիայի, Ֆրանսիայի և Շվեդիայի օրինակները շատ հատկանշական են:

Գերմանիայում բարձրագույն կրթության ռազմավարությունը նպատակ ունի ավելացնել Գերմանիայում սովորող արտասահմանյան ուսանողների թիվը և խթանել արտասահմանում սովորել ցանկացող ուսանողներին: Միաժամանակ իրականացվում են բարձրագույն կրթական ինստիտուտների քաղաքականությունների լայնածավալ բարեփոխումներ: Կրթական ավանդական կառուցվածքին զուգահեռ առաջարկվում են բակալավրի և մագիստրոսի աստիճաններ: Ներկայումս Գերմանիայում առկա են ավելի քան 400 կրթական աստիճան շնորհող կրթական ծրագրեր, որոնք հիմնված են նոր կառուցվածքի վրա (բակալավրիատ + մագիստրատուրա):

Գերմանիայի բարձրագույն կրթության ռազմավարությունն իր մեջ ներառում է նաև մարքեթինգային քաղաքականության իրականացում: Մարքեթինգի և տեղեկատվության ապահովման պատասխանատվությունը ընկած է Գերմանական ակադեմիական փոխանակման ծառայության (Deutscher Akademischer Austauschdienst, DAAD) վրա: Մարքեթինգային քաղաքականությունը կենտրոնացած է Հունաստանի, Թուրքիայի, Իրանի, Չինաստանի և Հարավային Կորեայի վրա: Գերմանիայում բարձրագույն կրթությունը տեղական ուսանողների համար անվճար է, իսկ համալսարաններն ինքնուրույն են որոշում՝ սահմանել ուսման վճարներ արտասահմանյան ուսանողների համար, թե՞ ոչ:

Ֆրանսիայի բարձրագույն կրթության ռազմավարությունը (մշակվել է 1998թ.) նպատակ է հետապնդում բարձրացնել Ֆրանսիայի բարձրագույն կրթության դերը գլոբալ կրթական համակարգում և նպաստել համագործակցությանը գիտահետազոտական ոլորտում: Ռազմավարության մեջ կրթական ոլորտում համագործակցությունը դիտարկվում է որպես կարևոր գործոն Ֆրանսիայի տնտեսական և մշակութային դիրքը ուժեղացնելու գործում: Ֆրանսիան նաև բարեփոխել է իր կրթական աստիճանների համակարգը՝ ստանդարտացնելով համալսարանների կողմից տրամադրվող կրթական աստիճանները: Ֆրանսիայում,

⁸ Huisman, J. and M.C. van der Wende (eds) (2004) "On Cooperation and Competition. National and European Policies for Internationalization of Higher Education. ACA Papers on International Cooperation, Lemmens, Bonn

ինչպես և Գերմանիայում, բարձրագույն կրթությունը հիմնականում անվճար է, սակայն որոշ մագիստրոսական կրթական ծրագրերի համար գանձվում են ուսման վճարներ:

Շվեդիայի բարձրագույն կրթության ռազմավարությունը (մշակվել է 2000թ.) նպատակ ունի ավելացնել օտարերկրյա ուսանողների թիվը, մասնավորապես ոչ ԵՄ երկրներից: Շվեդիայում բարձրագույն կրթությունն, ինչպես տեղական ուսանողների, այնպես էլ արտասահմանյան ուսանողների համար, անվճար է: Ընդհանուր առմամբ Շվեդիայի ռազմավարությունն իրենից ներկայացնում է մի ծրագիր, որը կոչված է օժանդակելու Շվեդիայի բարձրագույն կրթական համակարգի միջազգայնացմանը:

Ընդհանուր առմամբ, չնայած աստիճանների և որակի ապահովման համապատասխանեցման գործում բավական մեծ ձեռքբերումներին, դեռևս առկա են որոշակի դժվարություններ բարձրագույն կրթության ոլորտում ներդաշնակեցման գործում: Այսպես, համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ երկրների միջև բարեփոխումների գործընթացը և նոր կառուցվածքի կիրառումը կարող են էականորեն տարբերվել: Օրինակ՝ Նիդերլանդներում արդեն ամբողջովին ներդրվել է երկաստիճան կրթական համակարգ, իսկ Գերմանիայում նոր համակարգը կիրառվում է գործող հին համակարգի հետ զուգահեռ⁹: Ավելին, չնայած աստիճան շնորհող նոր ծրագրերի արագ աճին, Գերմանիայում սովորող ուսանողների շատ փոքր մասն է ներգրավված այդ ծրագրերում¹⁰:

Ուսումնասիրելով եվրոպական վեց երկրների բարձրագույն կրթական համակարգերը՝ պարզվել է, որ չկա մեկ միասնական մոտեցում աստիճան շնորհող նոր ծրագրերի կիրառման գործընթացում¹¹: Ամեն երկիր հաստատում է նոր ծրագրերի կիրառման իր ժամանակացույցը և տևողությունը: Այսպես, Մեծ Բրիտանիայում, ի տարբերություն եվրոպական այլ երկրների, մագիստրոսի աստիճան շնորհող ուսումնական ծրագրերի տևողությունը ավելի կարճ է՝ սովորաբար մեկ տարի:

Ամեն դեպքում, մենք այստեղ նպատակահարմար ենք գտնում էլ ավելի մանրամասն ուսումնասիրել և ներկայացնել բարձրագույն կրթության ոլորտում ինտեգրման ու բարեփոխումների **Նիդերլանդների** փորձը, քանի որ բարձրագույն կրթության ոլորտում Նիդերլանդների բարեփոխումների փորձը Եվրոպայում ամենահաջողվածներից մեկն է համարվում: Չնայած այն հանգամանքին, որ

9 Lub, A., M.C. van der Wende and J. Witte (2003), .The Implementation of the Bachelor-master System in Germany and the Netherlands., TEAM, Vol. 9, pp. 249-266.

¹⁰2001թ. ամբողջ ուսումնական ծրագրերի միայն 10% էր կազմակերպված բակալավրիատ-մագիստրատուրա համակարգով, որտեղ ներգրավված էին ամբողջ ուսանողների 1%, իսկ 2004թ.՝ համապատասխանաբար 23 և 3.5%:

11 Alesi, B., S. Burger, B. Kehm and U. Teichler (2005), Bachelor and Master Courses in Selected Countries Compared with Germany, Federal Ministry of Education and Research, Bonn/Berlin.

ցանկացած երկիր աչքի է ընկնում կրթական ոլորտի իր առանձնահատկություններով և յուրահատկություններով՝ այն կարող է ուղեցույց հանդիսանալ մյուս երկրների համար: Այսպես, 1990-ական թթ.-ից ի վեր Նիդերլանդների բարձրագույն կրթական համակարգի հիմնական բնութագրիչներն են.

- բարձրագույն կրթության տնտեսականացումը,
- քաղաքական նախապատվություն տրվեց կրթական ինստիտուտների պետականից դեպի մասնավոր փոխակերպմանը,
- քաղաքական նախապատվություն տրվեց կրթական ինստիտուտների մասշտաբի ընդլայնմանը (մասշտաբի էֆեկտ),
- կրթական ինստիտուտների ընդհանուր վերահսկման գործընթացում նախապատվությունը տրվեց հատուկ կառավարիչների ներգրավմանը:

1990-ական թթ.-ից ի վեր կրթության բոլոր որակական հատկանիշները սահմանվեցին տնտեսական չափանիշներով: Ինստիտուտների կրթական որակի գնահատումը սահմանվեց որպես ֆակուլտետի կողմից «կրեդիտների արտադրություն»՝ քանակական գնահատում, իսկ ինստիտուտների արդյունավետությունը սահմանեց, թե ինչպես է այդ «արտադրական գործընթացը» կազմակերպվում¹²: Այստեղ հարկ է նշել, որ ինստիտուտները ֆինանսավորվում են պետության կողմից՝ ելնելով մի շարք քանակական ցուցանիշներից («արտադրված» կրեդիտների քանակ, թեկնածուական աշխատանքների քանակ և այլն): Այսպիսով, հենց որ կրթությունը դիտարկվում է տնտեսական չափանիշներով (կրեդիտների «արտադրություն/առաջարկ» և «սպառում/պահանջարկ»), այդ գործընթացը կարող է ամբողջովին վերահսկվել համապատասխան հատուկ կառավարիչի կողմից՝ հաստատելով ֆակուլտետի համար արտադրության, իսկ ուսանողների համար՝ սպառման պարամետրեր (ներառյալ դասընթացների գները): Մյուս կողմից, Նիդերլանդների բարձրագույն կրթության նոր օրենքով (2007թ.) ուսանողները դիտարկվում են որպես կրթության «սպառողներ», իսկ գործատուները՝ որպես կրթություն ստացած «սպառողների» ապագա «սպառողներ»: Այսպիսով, քանի որ «շուկան» հանդիսանում է ակադեմիական արժեքները որոշող հիմնական մեխանիզմը, ապա այն պրոֆեսորները, որոնք դասավանդում են օգտակար, շահութաբեր դասընթացներ, պետք է ավելի լավ վարձատրվեն:

¹² Wissenschaftsrecht (2000) “The Myth of the Dutch Middle Way” vol.33, p.189-209.

Բարձրագույն կրթության նոր օրենքով, կրթական համակարգի մասնավորեցման գործընթացը պետք է ստանա իր վերջնական ձևը: Բարձրագույն կրթության բոլոր ինստիտուտներն իրավական առումով պետք է դառնան մասնավոր, սակայն պետք է շարունակեն մասամբ ֆինանսավորվել պետության կողմից: Ուստի, Նիդերլանդների կրթական համակարգում «մասնավոր» հասկացությունը խիստ տարբերվում է այլ երկրների մասնավոր կրթական համակարգերից:

3. Եվրոպական Միության կրթական համակարգը

Համաձայն ԵՄ հիմնադիր պայմանագրերի՝ կրթական քաղաքականության պատասխանատվությունն ընկած է անդամ պետությունների վրա: Միջին մասնագիտական կրթության իրավական հիմքը տարբերվում է հիմնական և բարձրագույն կրթությունից, քանի որ պայմանագրի Կրթություն, Մասնագիտական Ուսուցում և Երիտասարդություն 150-րդ հոդվածը Ընկերակցությանը հնարավորություն է տալիս համաձայնության գալ միջին մասնագիտական կրթության քաղաքականության մշակման գործընթացում: Մյուս կողմից, նույն պայմանագրի 149-րդ հոդվածը, որը վերաբերում է հիմնական ու բարձրագույն կրթությանը, անդամ երկրների համար հաստատում է կրթության պարունակության/կառուցվածքի ու կազմակերպման պատասխանատվություն և միևնույն ժամանակ, պահպանելով անդամ պետությունների իրավասությունը, արգելում է առանձին ազգային պայմանների թելադրումը ու տարածումը՝ ելնելով մշակութային ու լեզվական տարբերություններից:

Ներառված սահմանափակ հնարավորությունների պատճառով Կրթության ոլորտում Ընկերակցության մակարդակով միջոցառումները կենտրոնանում են շարժունության մակարդակի բարձրացման, կրթության եվրոպական ուղղվածության ուժեղացման և կրթության որակի բարելավման վրա: Կրթական քաղաքականությանը բաժին է ընկնում ԵՄ բյուջեի շատ չնչին մասը (մոտավորապես 0.5%):

Հաշվի առնելով ԵՄ կրթական քաղաքականության հիմքը՝ հարկ է նշել, որ ԵՄ նպատակն է հիմնել ավելի ոժեղ տնտեսական և քաղաքական միություն: Անդամ երկրների կրթական համակարգի պարունակությունը և նպատակները շատ մեծ ներդրում են ունենում այդ նպատակին հասնելու համար:

ԵՄ կրթական համակարգի առաջնայնությունները փոխկապակցված են ներքին շուկայի արդյունավետության բարձրացման հետ: Աշխատուժի

շարժունությանն օժանդակելու համար շատ կարևոր է նպաստել ուսանողների շարժունությանը: Կրեդիտների և աստիճանների փոխադարձ ճանաչման համակարգը կոչված է ուղղակիորեն նպաստելու աշխատուժի շարժունությանը:

ԵՄ շրջանակներում կրթական քաղաքականության կարևորությունն առաջ է եկել վերջին ժամանակներում: Լիսաբոնի և Ֆերայի եվրոպական խորհուրդների որոշումներով կրթությունը համարվում է շատ կարևոր գործոն մրցունակ և դինամիկ Եվրոպա կառուցելու գործընթացում: Կրթական հարցերն ավելի սերտորեն են փոխկապակցվել Միության տնտեսական և զբաղվածության քաղաքականությունների հետ:

Լիսաբոնի եվրոպական խորհուրդը որոշեց էլ ավելի ուժեղացնել Միության ներքին ընդհանուր քաղաքականությունները: Քանի որ քննարկվեց նաև կրթական քաղաքականությունը, ապա դա նշանակում է, որ Միությունը ձգտում է համապարփակ ռազմավարության, որի հիմնարար մասը կազմում է «բաց կոորդինացիայի մեթոդը», այսինքն Միության հիմնական գործունեությունն այդ ոլորտում պետք է կրի կոորդինացնող բնույթ:

Չնայած այն հանգամանքին, որ կրթական քաղաքականության հարցերում ներկայիս ԵՄ անդամները ընդհանուր առմամբ շատ ավելի կողմ են սուբսիդիար իրավասության սկզբունքին, այնուամենայնիվ անդամ երկրները փնտրում են ուղիներ միջկառավարական համագործակցությունը ընդլայնելու համար: Սորբոն-Բոլոնիա գործընթացները և Ֆլորենցիայի հռչակագիրը, որտեղ բոլոր անդամ երկրները կամ դրանց մի մասը ցանկություն են հայտնել ավելացնել կրթական քաղաքականության միանմանությունը, դրա վառ օրինակներ են:

ԵՄ կրթական քաղաքականություն: Եվրոպական Միության կրթական քաղաքականությունը հանդիսանում է Եվրոպական Միության անդամ պետությունների ներպետական քաղաքականության ոլորտ: Այսպիսով, Եվրոպական Միությունը չունի ընդհանուր կրթական քաղաքականություն, և Ընկերակցության դերը կայանում է անդամ պետությունների միջև իրական համագործակցության համակարգի ստեղծման մեջ՝ միաժամանակ պահպանելով անդամ պետությունների ինքնուրույնությունը կրթական համակարգի կառավարման գործում:

Սույն դրույթը նաև ներկայացված է Ամստերդամի պայմանագրի 149 հոդվածում, որտեղ մասնավորապես ասվում է հետևյալը¹³.

¹³ «Եվրոպական Ընկերակցության Հիմնադրման և Եվրոպական Միության Մասին Պայմանագրեր», Եվրոպական Իրավունքի և Ինտեգրման Կենտրոն, 2007թ.

«Ընկերակցությունն օժանդակում է որակյալ կրթության զարգացմանը՝ խրախուսելով անդամ պետությունների համագործակցությանը և, ըստ անհրաժեշտության, աջակցելով և համալրելով նրանց գործունեությունը, միաժամանակ լիովին հարգելով ուսուցման բովանդակության և կրթական համակարգերի կազմակերպման հարցերում անդամ պետությունների իրավասությունը և մշակութային ու լեզվական տարբերությունները»:

Նույն հոդվածի երկրորդ պարբերությունում ներկայացված են Ընկերակցության նպատակները սույն ոլորտում.

«Ընկերակցության գործունեությունը նպատակ է հետապնդում զարգացնել կրթության եվրոպական չափանիշները մասնավորապես անդամ պետությունների լեզուների ուսուցման և տարածման միջոցով,

- խրախուսել ուսանողների և ուսուցիչների շարժը, այդ թվում՝ գիտական շրջանակներում դիպլոմների և ուսուցման ժամկետների ճանաչման միջոցով,
- նպաստել կրթական հաստատությունների համագործակցությանը,
- աջակցել անդամ պետությունների կրթական համակարգերի ընդհանուր խնդիրներին առնչվող տեղեկատվության և փորձի փոխանակմանը,
- խրախուսել հասարակական գիտությունների ոլորտի երիտասարդների և դասավանդողների փոխանակման զարգացումը,
- խրախուսել հեռակա կրթության զարգացումը»:

Միևնույն ժամանակ Ընկերակցությունը գիտակցում է, որ անդամ պետությունների տարածքում կրթական ոլորտի համակարգումը կարևոր նախապայման է նաև մասնագիտական չափանիշների համակարգման, դիպլոմների և վկայականների նույնացման և ընդհանուր առմամբ հավասար պայմանների և չափանիշների ընձեռնման համար: Այդ իսկ պատճառով նույն պայմանագրի 150-րդ հոդվածը սահմանում է հետևալը.

«Ընկերակցության գործունեությունը նպատակ է հետապնդում՝

- նպաստել արդյունաբերական փոփոխություններին հարմարվելու գործընթացին, մասնավորապես՝ մասնագիտական ուսուցման և վերապատրաստման միջոցով,
- կատարելագործել նախնական և հետագա մասնագիտական ուսուցումը՝ աշխատանքային շուկայում մասնագիտական ինտեգրմանը և վերաինտեգրմանը նպաստելու համար,

- բարձրացնել մասնագիտական ուսուցման մատչելիության մակարդակը և խրախուսել դասավանդողների ու վերապատրաստվողների և մասնավորապես երիտասարդների շարժը,
- խթանել կրթական կամ ուսուցողական հաստատությունների և կենտրոնների համագործակցությունը ուսուցման ոլորտում,
- զարգացնել անդամ պետությունների մասնագիտական ուսուցման համակարգերի ընդհանուր խնդիրներին առնչվող տեղեկատվության և փորձի փոխանակումը»:

Վերը նշված հոդվածներից երևում է, որ Եվրոպական Միությունը չի իրականացնում «ընդհանուր քաղաքականություն» կրթության ոլորտում: Միևնույն ժամանակ պայմանագրերի նշված հոդվածների բովանդակությունը վկայում է այն մասին, որ Եվրոպական ինստիտուտներն օժանդակող դերակատարություն են իրականացնում անդամ պետությունների կրթական համակարգի ընդհանուր ռազմավարության ձևավորման գործընթացում: Մասնավորապես դա իրականացվում է անդամ պետությունների միջև համատեղ ուսումնական ծրագրերի իրականացմամբ, ուսումնական հաստատությունների միջև համագործակցության ծրագրերի մշակմամբ, ուսանողների փոխանակման մեխանիզմների առաջարկությամբ: Այդ իսկ պատճառով Եվրոպական Ընկերակցությունը ֆինանսավորում է որոշ ծրագրեր, որոնք նպատակ ունեն սահմանելու համաեվրոպական կրթական չափանիշներ, մասնագիտական որակավորման համահունչ պահանջներ, վերապատրաստման տարբերակներ:

Եվրամիության կրթության բնագավառում գործում են երկու հիմնական մարմիններ՝ ԵՄ Մասնագիտական կրթության զարգացման կենտրոնը և Մասնագիտական կրթության ոլորտում խորհրդատվական հանձնաժողովը:

Համապատասխան օրենսդրության առկայությունը հնարավորություն է ընձեռում թեկնածու երկրներին մասնակցել այս ոլորտում իրականացվող ծրագրերին: Կենտրոնական Եվրոպայի տաս երկրները, ինչպես նաև Կիպրոսն ու Մալթան, նույնպես մասնակցում էին կրթության, մասնագիտական վերապատրաստման և երիտասարդության ոլորտում իրականացվող Ընկերակցության ծրագրերին: Նշված երկրներում արդեն ստեղծվել է ԵՄ մասնագիտական կրթության զարգացման կենտրոն: Տասներկու նախկին թեկնածու երկրներում օրենսդրական բարեփոխումներ են կատարվել գաղթական աշխատողների երեխաների կրթության մասին թիվ 77/486 դիրեկտիվի արդյունավետ կիրառումն ապահովելու համար: Անդամ-պետությունները պետք է անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկեն մասնագիտական կրթություն

իրականացնող ուսուցիչների վերապատրաստման և հետագա վերապատրաստման համար:

2000թ. ԵՄ նախաձեռնեց մի շարք բարեփոխումներ՝ գիտակցելով որ կրթական մակարդակի բարձրացումը կարևոր է նաև Ընկերակցության տնտեսական, սոցիալական նպատակների իրականացման համար, ԵՄ անդամ պետությունների միասին նախաձեռնեցին համատեղ 13 հատուկ նպատակների սահմանում, որոնք իր արտացոլումն են ստացել Կրթության և վերապատրաստման 2010 թ. ծրագրում:

Եվրոպական Ընկերակցությունը նաև հանդիսանում է տարբեր միջկառավարական ծրագրերի մասնակից, ներառյալ Բոլոնիայի գործընթացը, որի նպատակն է հանդիսանում Եվրոպական բարձրագույն կրթության դաշտի ստեղծումը՝ ներդաշնակեցնելով ակադեմիական աստիճանները, ինչպես նաև ակադեմիական որակի չափանիշները: Բոլոնյան գործընթացին նախորդած կարևոր փաստաթղթերի շարքում կարելի է նշել Սորբոնի Հռչակագիրը /Բարձրագույն կրթության Եվրոպական համակարգի կառուցվածքային ներդաշնակման Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի և Մեծ Բրիտանիայի կրթության նախարարների համատեղ Հռչակագիր/, որը կնքվել է 1998թ. մայիսի 25: Համաձայն այս փաստաթղթի՝ Բարձրագույն կրթության եվրոպական բաց տարածքն ունի լայն և դրական հեռանկարներ՝ ընդունելով անշուշտ բազմազանությունները՝ միաժամանակ պահանջելով շարունակական ջանքեր՝ վերացնելու խոչընդոտները և զարգացնելու ուսումնառության և ուսուցման շրջանակները, որը և կբարձրացնի շարժունությունը ու ավելի կսերտացնի համագործակցությունը: Մեր համակարգերի միջազգային ճանաչման և գրավչության ներուժը ուղղակիորեն առնչվում է դրանց արտաքին և ներքին դյուրընթեռնելիությանը: Երկփուլ կրթական համակարգը պետք է լայնորեն կիրառվի միջազգային համեմատելիության և համարժեքության ճանաչման համար: Համակարգի յուրօրինակությանը և ճկունությանը կարելի է հասնել՝ օգտագործելով կրեդիտների (Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգի /ECTS/ սխեման) և կիսամյակային համակարգը: Նշվածը հնարավորություն կընձեռնի նախնական փուլերում ստացած կրեդիտները փոխանցել այլ եվրոպական երկրների համալսարաններ՝ որակավորում ստանալու նպատակով իրենց աշխատանքային գործունեության ընթացքում: Համաձայն այս հռչակագրի՝ բուհական ուսումնառության ընթացքում պետք է հնարավորություն ընձեռնվի ընտրել մագիստրոսական կարճաժամկետ կամ դոկտորական ուսուցման երկարաժամկետ դասընթացներ, ինչպես նաև մեկից մյուսին անցնելու հնարավորություն: Նշված երկու աստիճանների

ուսումնական ծրագրերում կկարևորվեն գիտահետազոտական և ինքնուրույն աշխատանքները:

Եվրոպական Միության հետաքրքրությունը կրթական քաղաքականության ոլորտում ավելի խորը զարգացում ստացավ Լիսաբոնի գազաթաժողովից հետո /մարտ 2000թ./, որի ժամանակ ԵՄ անդամ պետությունների ղեկավարները դիմեցին եվրոպական կրթության նախարարներին՝ կրթական համակարգի կոնկրետ խնդիրները և նրանց զարգացման հեռանկարները սահմանելու համար: Իդեալ, որպես գնահատողական փաստաթուղթ, Հանձնաժողովը նաև հրապարակում է միջոցառումների փաստաթուղթ, որոնց նպատակն է խրախուսել անդամ պետություններին ավելի սերտ համագործակցության եզրեր գտնել:

Հանձնաժողովը նման փաստաթղթեր հրապարակում է երկար տարիներ, մինչդեռ նրանցից միայն մի քանիսն ի կատար ածվեցին մինչև 2000թ.-ի մարտի Լիսաբոնյան գազաթաժողովը: Գազաթաժողովը, որը նպատակ էր հետապնդում խորացնել պետությունների համագործակցության եզրերը, կարծես թե նոր թափ հաղորդեց անդամ պետություններին սույն ոլորտում համագործակցության համար:

Եվրոպական հանձնաժողովը և Եվրոպական անդամ պետությունները միասին աշխատեցին Եվրոպական Խորհրդի 2001 թ. գարնանային զեկույցի վրա, և 2002 գարնանային գազաթաժողովը, հավանություն տվեց նրանց աշխատանքային ծրագրին: Այն ներառում էր կոնկրետ միջոցառումների ցանկ կոնկրետ տարվա կտրվածքով: Նմանատիպ համատեղ զեկույցներ հրապարակվում են գրեթե ամեն տարի:

Հանձնաժողովը նպատակ ունի ոգեշնչել անդամ պետություններին՝ բարելավելու իրենց կրթության որակը երկու եղանակով՝ Նպատակի սահմանմամբ և անդամ պետությունների դիրքորոշումը հրապարակելով: Այս գործընթացը հայտնի է «կոորդինացման բաց մեթոդ» անվամբ:

2001 թ. փետրվարի 12-ին հանձնաժողովի առաջարկի և անդամ պետությունների ներդրումների հիման վրա Խորհուրդն ընդունել է որոշում «Հաշվետվությունների կրթական համակարգի հետագա նպատակների մասին»: Սա առաջին փաստաթուղթն է, որը սահմանում է ազգային կրթական քաղաքականությունների համար համընդհանուր մոտեցում՝ ելնելով հետևալ երեք նպատակներից.

- բարելավել կրթության և վերապատրաստման համակարգերի որակը,
- «հարատև ուսուցումը» դարձնել ավելի մատչելի,

- կրթության և վերապատրաստման համակարգերը դարձնել ավելի առաջադեմ

Հաշվետվությունը հաստատվել է 2001թ. մարտին և ընդունվել 2002թ. փետրվարի 14-ին Ստոկհոլմում կայացած Եվրախորհրդի հանդիպման ժամանակ, որտեղ ներկայացվել է մանրամասն աշխատանքային ծրագիրը: Այս մեթոդի իրագործումը պահանջում է «կոորդինացման բաց մեթոդի» կիրառում: Այս ռազմավարության կարևոր մասն է կազմում «հարատև ուսուցումը»: Հարատև ուսուցումն ընդգրկում է անհատական, քաղաքացիական և սոցիալական, ինչպես նաև զբաղվածության հետ կապված նպատակային ուսուցումը: Այն իրականացվում է տարբեր ոլորտներում: Հարատև ուսուցումը ենթադրում է մարդկային ռեսուրսների և գիտական բնագավառում ներդրումների բարձրացում, հիմնական /ներառյալ թվային տեխնոլոգիաներից օգտվելու/ հմտությունների ձեռքբերման խթանում, ինչպես նաև ուսուցման նոր, ավելի ճկուն մեթոդների կիրառում: Ուսուցման այս ձևը նպատակ է հետապնդում ամբողջ Եվրոպայում բոլոր տարիքի մարդկանց համար ապահովել բարձր որակի կրթություն ստանալու իրավունքից օգտվելու հավասար հնարավորություն:

Հարատև ուսուցման ծրագիրը թևակոխեց նոր շրջան, երբ 2006 թ. նոյեմբերին ընդունվեց Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 1720/2006/ԵՄ որոշումը: Այդ ծրագիրը ընդգրկում է 2007-2013թթ. և իրենից ներկայացնում է միասնական գործողությունների և ֆինանսավորման փաստաթուղթ:

ԵՄ կրթական ծրագրեր: ԵՄ կրթության ոլորտում կոնկրետ միջոցառումները նախաձեռնվում և արտահայտվում են հատուկ գործողությունների ծրագրերում: Առաջին մասն ծրագրերը կիրառվել են 1980թթ.: Այսպես, 1987թ. հուլիսին Եվրոպական Միությունն ընդունեց իր առաջին կրթական ծրագիրը՝ «COMETT», որի նպատակն էր աջակցել համալսարանների միջև տարաբնույթ ծրագրերի իրականացմանը: Այս ծրագրին հաջորդեց «ERASMUS» ծրագիրը, որը խրախուսում էր միջբուհական համագործակցությունը և ուսանողների շարժունությունը: Այս ծրագրերը ընդունվել են ԵՄ անդամ պետությունների համագործակցության արդյունքում, սակայն Եվրոպական Խորհրդարանի էական ֆինանսական օժանդակության շնորհիվ:

«ERASMUS» ծրագրի շրջանակներում միայն առաջին ուսումնական տարվա ընթացքում մասնակցեցին ավելի քան 3244 ուսանող: Ներկայումս յուրաքանչյուր տարի մոտ 150,000 ուսանող օգտվում է սույն ծրագրի ընձեռած հնարավորություններից: «ERASMUS» ծրագիրն անկասկած լավագույն կրթական ծրագրերից մեկն է: Այն խրախուսում է ուսանողների և դասավանդողների

շարժունությանը, որը շատ կարևոր է նոր ռազմավարության իրականացման գործում: Միջազգային շարժունության զարգացմանը նպաստելու ընդհանուր ցանկությունն արտացոլվեց 2001 թ. հուլիսին Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի կողմից ընդունված առաջարկությունում, ինչպես նաև 2002թ. փետրվարի «Հմտությունների և շարժունության մասին» գործողության ծրագրում:

1995 թ. ստեղծվեց «SOCRATES» ծրագիրը, որն իր մեջ ընդգրկեց արդեն իսկ գործող «ERASMUS» և «LINGUA» (օտար լեզուների ուսուցման միջոցառումներ) ծրագրերը, ինչպես նաև Ընկերակցության հետևյալ նոր նախագծերը՝ «COMENIUS» (դպրոցական ուսուցման ոլորտի ծրագիր), «MINERVA» (հեռակա ուսուցման ոլորտի ծրագիր) և «GRUNDTVIG» (լրացուցիչ կրթության և վերապատրաստման ծրագիր): «SOCRATES» ծրագրի երկրորդ փուլը գործում է 2000 թվականից և հետապնդում է հետևյալ նպատակները՝

- Եվրոպական չափանիշների սահմանում և Եվրոպական կրթական ռեսուրսների մատչելիություն:
- Օտար լեզուների որակական և քանակական մակարդակի բարձրացում:
- Բուհերի միջև համագործակցության խորացում, հեռակա ուսուցման զարգացում, դիպլոմների փոխադարձ ճանանչում:
- Նոր տեխնոլոգիաների և տեղեկատվության զարգացում և փոխանակում:

Սույն ծրագիրը 2003թ. դեկտեմբերին համալրվեց ևս մի նոր ծրագրով: Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 2317/2003/ԵՄ որոշմամբ հիմնադրվեց «ERASMUS MUNDUS» ծրագիրը: Սույն ծրագրի նպատակն է խթանել զարգացող երկրների հետ կրթական ոլորտում համագործակցությունը:

Հաջորդ կարևոր ծրագիրը, որը իրականացվում է ԵՄ շրջանակներում, դա «LEONARDO DA VINCI» ծրագիրն է: Այս ծրագիրը վերազգային համագործակցության արդյունքում օժանդակում է անդամ պետություններին կրթության որակը բարելավելու, նորանուծությունները խթանելու և վերապատրաստման համակարգերը և փորձն ամրապնդելու գործում: Ծրագրի հիմնական նպատակն է տարբեր ոլորտի մասնագիտությունների շրջանակներում խրախուսել մասնագիտական վերապատրաստումների գործընթացը:

Եվրոպական Ընկերակցության նշանակալից ծրագրերից կարելի է մատնանշել նաև «TEMPUS» ծրագիրը: Սա տրանսեվրոպական համալսարանական համագործակցության ծրագիր է, որի նպատակն է ինչպես փոխանակման ծրագրերի իրականացումը, այնպես էլ որակավորված մասնագետների պատրաստումը և

վերապատրաստումը, կրթական համակարգի բարեփոխումները, քաղաքացիների կրթական մակարդակի բարձրացումը: Սույն ծրագիրը ի սկզբանե նպատակ էր հետապնդում հաստատել համագործակցություն Լեհաստանի, Հունգարիայի և Ընկերակցության միջև: Հետագայում ծրագիրը տարածվեց նաև Արևելյան Եվրոպայի բոլոր անդամ պետությունների վրա, դեռևս մինչև նրանց անդամությունը, ինչպես նաև ԱՊՀ պետությունների և Մոնղոլիայի վրա:

«TEMPUS» ծրագիրն իրականացվել է մի քանի փուլերով: Արդեն իսկ մեկնարկել է ծրագրի 4-րդ փուլը, որը ընդգրկում է հետևյալ սկզբունքները.

- ազգային իշխանությունների ներգրավում ծրագրերի սահմանման և ընտրության հարցում:
- ծրագրի իրականացումը ԵՄ անդամ պետությունների համապատասխան ազգային օղակների և գործընկեր պետության «TEMPUS» գրասենյակների միջև:

«TEMPUS»-ը կրթական ոլորտում շատ հարցեր է լուծում, մասնավորապես տալիս է հնարավորություն մասնագիտական կատարելագործման և զարգացման գործում, թույլ է տալիս լուծել կարևոր հարցեր բուհերում, մշակել թիմային մոտեցում, հնարավորություն է տալիս ծանոթանալ այլ երկրների և հասարակությունների համալսարանական մշակույթի հետ, ընձեռնում է երկարատև համագործակցության հնարավորություն:

Ծրագրի շրջանակներում իրականացվող բոլոր աշխատանքները, ինչպես նախկինում, տարվելու են միավորումներում, այսինքն՝ եվրոպական համալսարանների հետ համագործակցությամբ, ինչպես նաև ձեռնարկությունների, ոչ պետական կազմակերպությունների, պետական ծառայությունների, տեղական իշխանությունների հետ համագործակցելու ճանապարհով: Համալսարանների միջև համագործակցությունը կարող է իրականացվել տարբեր մակարդակներով, կարող են նախագծեր իրագործվել ակադեմիական ծրագրերի մշակման գծով և համալսարանի կառավարման զարգացման գծով: Միավորումների մասնակիցներն ընտրվելու են կախված նրանից, թե առաջնային հարցերի ինչպիսի հերթականություն կտրամադրի Եվրոպական հանձնաժողովին յուրաքանչյուր երկիր: Ծրագրի շրջանակներում անհրաժեշտ է ստեղծել բուհերի միավորում, ինչպես նաև ոչ ակադեմիական կազմակերպությունների միավորում և առաջարկել ֆինանսավորման համատեղ նախագիծ: Նախագծի իրականացմանը կարող են անմիջական մասնակցություն ունենալ մինչև 30 մարդ միայն մեկ երկրից: Բուհերի աշխատակիցները կարող են

մեկնել եվրոպական բուհեր, բարձրացնել իրենց որակավորումը, զարգացնել և թարմացնել իրենց նախագծերը, որոնք առնչվելու են ոչ միայն կրթական ծրագրերին, այլև համալսարանի կառավարմանը:

4. Փարիզի և Լիսաբոնի հռչակագրերն ու ԱՀԿ փոխհարաբերությունը

1998թ. ընդունված Փարիզի հռչակագիրը, որն էլ հենց հիմք հանդիսացավ Բոլոնիայի գործընթացի զարգացման համար, բարձրացրեց այնպիսի լուրջ հարցեր, ինչպիսիք են եվրոպական բարձրագույն կրթության մրցունակության և գլոբալ գրավչության բարձրացումը, մասնավորապես՝ ի հակադրություն Հյուսիսային Ամերիկայի և Ավստրալիայի (երկու անգլիախոս գլոբալ տարածաշրջաններ): Եվրոպան, բացի Մեծ Բրիտանիայից, բարձրագույն կրթության ոլորտում մրցակցության արդյունքում կորցրեց ասիական ուսանողների աճող շուկան: Մեծ Բրիտանիայի բարձրագույն կրթության «բացառիկ» հաջողության պատճառով էլ հավանաբար բացատրվում է, թե ինչու առանց երկար քննարկումների Բոլոնիայում որպես եվրոպական հիմնական մոդել ընդունվեց բարձրագույն կրթության անգլոսաքսոնական կառուցվածքը: Այն հանգամանքը, որ անգլոսաքսոնական մոդելի հաջողությունը բացատրվում է անգլերեն լեզվի գլոբալ դիրքով, այլ ոչ թե կրթական ինստիտուտների ֆորմալ կառուցվածքով, շատ խորությամբ ուսումնասիրված չէ: Լեզվի հիմնախնդիրն եվրոպական բարձրագույն կրթական համակարգում գրեթե երբևէ չի քննարկվել քաղաքականության մակարդակով: Պարզապես շատ դժվար կլինի փոխել բարձրագույն կրթության համակարգում դասավանդվող լեզուն՝ հաստատելով դա քաղաքականության փաստաթղթերում: Այդ պատճառով լեզվի հիմնախնդիրը հաճախ պարզապես բաց է թողնվում (բացառապես այն դեպքերի, երբ բարձրագույն կրթությունը դիտարկվում է որպես արտահանվող ապրանք, քանի որ այս դեպքում բարձրագույն կրթական համակարգում անգլերեն լեզվի կիրառումն անժխտելի փաստ է):

Ներկայումս եվրոպացիներն անհանգստանում են, որ Փարիզի հռչակագրով սկիզբ առած բարձրագույն կրթության գլոբալ շուկան սկզբնական շրջանում ունեցել է տնտեսական դրդապատճառներ՝ չնայած այն հանգամանքին, որ «Եվրոպական մշակույթ»-ին ձևական հղում եղել է¹⁴: Տնտեսական դրդապատճառները շատ ավելի

¹⁴Նմանապես միայն տնտեսական քաղաքականության նպատակներն են փոխանցվել քաղաքականության գործնական ոլորտ: Տե՛ս Եվրոպական Միության Լիսաբոնի ռազմավարություն www.etuc.org/a/652.

վառ արտահայտվեցին ԵՄ Լիսաբոնի գազաթնաժողովում (2000թ. մարտ): Այստեղ ԵՄ ներկայացուցիչները նշեցին, որ ԱՄՆ բարձրագույն կրթության «արտահանման արժեքը» կազմում է միլիարդավոր դոլարներ (2005թ. 565,039 օտարերկրյա ուսանողներից ԱՄՆ տնտեսությունը ստացել է 13.3 մլրդ. դոլար) և նույնիսկ Ավտրալիայի բարձրագույն կրթական համակարգն աշխարհում գրավում է հինգերորդ տեղը «արտահանման արժեքով»¹⁵: Այսպիսով, Լիսաբոնում ԵՄ իր մտադրությունն արտահայտեց դառնալ «աշխարհի ամենադինամիկ և ամենամրցունակ տնտեսական միությունը»:

Այս ենթատեքստում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայիս գլոբալ տնտեսությունը «գիտելիքի վրա հիմնված» տնտեսություն է և ԵՄ-ն նույնպես գործում է «գիտելիքի վրա հիմնված հասարակություն» մեջ ԵՄ ներկայացուցիչները եկան այն կարիծիքի, որ Եվրոպական բարձրագույն կրթությունը պետք է դառնա աշխարհում ամենադինամիկը և ամենամրցունակը:

Այսպիսով, Փարիզի հռչակագիրը (1998թ.), Բոլոնիայի հռչակագիրը (1999թ.) և Լիսաբոնի հռչակագիրը (2000թ.) միասին կազմում են մեկ ամբողջություն: Մյուս կողմից, ինչպես նկատեցինք, բոլոր եվրոպական հռչակագրերն իրենց մեջ հիմնականում պարունակում են կրթության տնտեսական կողմերը՝ ընդունելով բարձրագույն կրթությունը որպես ապրանք, որի հիմնական ֆունկցիան պետք է լինի եվրոպական տնտեսության խթանումը: Սա ավելի վառ արտահայտված է Փարիզի և Լիսաբոնի, քան Բոլոնիայի հռչակագրում՝ չնայած վերջինում նույնպես շեշտվում է, որ բարձրագույն կրթության հիմնական ֆունկցիաներից մեկը պետք է լինի աշխատուժի շուկայի խթանումը: Ուստի, բոլոր հռչակագրերի հիմնական նպատակն է ձևափոխել բարձրագույն կրթության բազմաթիվ տարբեր ազգային համակարգերը մեկ մրցունակ եվրոպական «կրթական շուկայի»: Թե ինչպե՞ս է այդ նպատակը գործնականում կյանքի կոչվելու, դեռևս հստակ պարզ չէ, քանի որ ազգային կառավարման մարմինները շարունակում են մնալ պատասխանատու այդ նպատակների իրականացման համար: ԵՄ արդեն կանգ է առել լուրջ խնդիրների առաջ, որի վառ օրինակ էր Նիդերլանդները (որտեղ նախքան բարձրագույն կրթական ոլորտում իրականացված բարեփոխումներն առկա էր բարձրագույն կրթության ոչ մրցունակ պետական համակարգ, մասշտաբի էֆեկտի բացակայություն, ուսումնական ծրագրերի

¹⁵ *New York Times* editorial 'Imported brains'; 3 December 2005.

և աստիճանների տարբերություն և այլն)¹⁶: Այդ պատճառով յուրաքանչյուր բարձագույն կրթական համակարգի կողմից արտադրված «արժեքների» ստանդարտացման համար ներմուծվեց ECTS-ը (European Credit Transfer System), որպեսզի բոլոր եվրոպական աստիճանները լինեն համատեղելի և համեմատելի: ECTS-ի ներմուծումը կարելի է համեմատել եվրոյի ներմուծման հետ, քանի որ ամբողջ Եվրոպայում բարձրագույն կրթության «արժեքը» առնվազն տեսականորեն և լեզվի հիմնխնդրի արատրահման դեպքում ապագայում կարող է հաշվարկվել, համեմեմատվել և փոխանակվել միևնույն կրեդիտներով: Սակայն, ի տարբերություն եվրոյի, ECTS ներմուծումը միաժամանակ չի կատարվում: Այդ գործընթացը տարբեր եվրոպական երկրներում գտնվում է տարբեր փուլերում, իսկ առաջատարը համարվում է Նիդերլանդները¹⁷:

Եվրոպական բարձրագույն կրթական համակարգի զարգացման շատ կարևոր մի հանգամանք, որը շատ հազվադեպ է նշվում ԵՄ բարձրագույն կրթության հռչակագրերում դա Առևտրի Համաշխարհային Կազմակերպության (ԱՀԿ), մասնավորապես՝ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի (General Agreements on Trade on Services, GATS) քաղաքականություններն են: ԵՄ քաղաքականության փաստաթղթերում GATS կարգավորումների բացակայության հիմնական պատճառն այն է, որ այդ կարգավորումները ենթական չեն որևէ խորհրդարանական վերահսկման¹⁸: Այդ պատճառով, ի տարբերություն Բոլոնիայի շրջանակներում կարգավորումների, GATS-ի շրջանակներում կարգավորումներն ունեն միջազգային պայմանագրերի կարգավիճակ, որոնք կարող են պարտադրվել միջազգային իրավունքով և միջազգային դատարաններով:

GATS-ի նեո-լիբերալ մոտեցման համաձայն՝ բարձրագույն կրթությունը, որը օրենքով ամրագրված է որպես ազգային տնտեսությունների քաղաքացիների իրավունք, վերասահմանվել և փոխակերպվել է այնպիսի միջազգային ապրանքի, որը կարող է գնվել և վաճառվել ցանկացած միջազգային աղբյուրից: ԱՄՆ քաղաքացիների համար այս մոտեցումն իրենից արմատական փոփոխություն չի ներկայացնի, սակայն շատ եվրոպացիների համար այն դիտվում է որպես արմատական փոփոխություն

¹⁶Տե՛ս Նիդերլանդների իրավիճակը 2005թ.: <http://www.cbs.nl/nl-NL/menu/themas/macro-economie-financie-instellingen/nationale-rekeningen/publicaties/artikelen/2005-1798-wm.htm>

¹⁷ ECTS իրական իրավիճակը դիտարկելու համար տե՛ս www.esib.org/wg/education/ECTSSurvey.htm

¹⁸ ԵՄ շրջանակներում Եվրոպական հանձնաժողովը այն միակ մարմինն է, որը իրավասություն ունի բանակցել GATS-ի շրջանակներում: Մյուս կողմից ինչպես մենք գիտենք Եվրոպական խորհրդարանն իրավասություն չունի վերահսկել Եվրոպական հանձնաժողովին: Այսպիսով, Եվրոպական խորհրդարանից դուրս GATS-ի քաղաքական վերահսկումը շատ ավելի դժվար է, քանի որ բարձրագույն կրթությունը դեռևս պատկանում է ազգային կրթության նախարարություններին, որոնք չունեն ուղղակի կապ Եվրոպական հանձնաժողովի հետ:

բարձրագույն կրթության ոլորտում: Մյուս կողմից GATS-ի մոտեցումը կարող է նաև անակնկալի բերել ԱՄՆ-ի քաղաքացիներին, քանի որ GATS-ը սահմանում է այսպես կոչված «ազգային ռեժիմի» սկզբունքը: Համաձայն այս սկզբունքի՝ ազգային կառավարություններին արգելվում է ազգային տնտեսության շրջանակներում ծառայությունների մատուցման գործընթացում խտրականություն դնել ազգային սահմաններից դուրս ծառայություն տրամադրողների նկատմամբ:

Այսպիսով, Բոլոնիայի գործընթացի և ԱՀԿ շրջանակներում բարձրագույն կրթության կարգավորման գործում դեռևս առկա է զգալի անջրպետ, քանի որ Բոլոնիայի գործընթացն իրականացվում է անդամ երկրների վերահսկողությամբ, իսկ ԱՀԿ կարգավորումներն այդ ոլորտում՝ միմիայն Եվրոպական հանձնաժողովի:

5. Բոլոնիայի գործընթացը և Հայաստանի մասնակցությունն այդ գործընթացին

1990-ական թթ. վերջերին բարձրացվեց եվրոպական կրթական համակարգի գլոբալ մրցունակության ապահովման հիմնախնդիրը, քանի որ չնայած ներեվրոպական շարժունության բավական բարձր մակարդակի՝ բավական ցածր էր Եվրոպայից դուրս շարժունության մակարդակը: Այդ պատճառով 1998թ. չորս երկրների (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա և Իտալիա) կրթության նախարարները Փարիզում հանդիպեցին՝ քննարկելու աստիճանների կառուցվածքի ներդաշնակեցման հնարավորությունը (Փարիզի հռչակագիր): Այս նախաձեռնությունն էլ հենց հիմք հանդիսացավ Բոլոնիայի գործընթացի զարգացման համար: Բոլոնիայի հռչակագրի հիմնական նպատակն է ուժեղացնել եվրոպական բարձրագույն կրթության դերը համաշխարհային կրթական շուկայում:

Այսպես, Բոլոնիայի գործընթացը սկիզբ առավ 1999թ. որպես միջկառավարական գործընթաց և անկախ բարձրագույն կրթության ոլորտում որևէ ԵՄ գործունեության, մասնավորապես՝ Եվրոպական Հանձնաժողովի¹⁹: Բարձրագույն կրթության համար պատասխանատու նախարարների կողմից դա ստացավ հռչակագրի ձև, որ նրանք մինչև 2010թ. պետք է ստեղծեն Բարձրագույն կրթության եվրոպական տարածք: Հռչակագիրը ստորագրելով՝ նախարարները իրենց կառավարություններին փոխանցել են օժանդակել ակադեմիական ազատության

¹⁹Սակայն հետագայում Հանձնաժողովը նույնպես ներգրավվեց գործընթացի մեջ՝ եվրոպական բարձրագույն կրթության մրցունակությանը խթանելու համար: Այսպես, 2000թ. Լիսաբոնում ԵՄ անդամ պետությունների ղեկավարները հայտարարեցին, որ մինչև 2010թ. ԵՄ պետք է դառնա ամենամրցունակ և ամենադինամիկ «գիտելիքի վրա հիմնված» տնտեսությունը աշխարհում:

արժեքներին, համալսարանների, որոնք պատկանում են Մագնա խարտիային²⁰, սոցիալական պատասխանատվությանը և անկախությանը ու ներմուծել վեց չափորոշիչ իրենց ազգային բարձրագույն կրթության համակարգերում: Հռչակագիրն անմիջապես ստորագրեցին 29 երկրներ՝ ներառելով մի շարք ոչ ԵՄ երկրներ: Մասնակից երկրները պարտավորվել են՝

- ընդունել «ոլորնթեռների և համեմատելի» կրթական աստիճանների համակարգ,
- կիրառել երկու անկախ փուլերի վրա հիմնված կրթական աստիճանի համակարգ,
- հիմնադրել կրեդիտային համակարգ,
- նպաստել շարժունությանը,
- խթանել համագործակցությունը որակի ապահովման գործընթացում և
- նպաստել բարձրագույն կրթության եվրոպական ուղղվածությանը (Տե՛ս Հավելված, Աղյուսակ 1 ա):

Նախարարները համաձայնության եկան երկու տարուց հանդիպել Պրահայում: 2001թ. Պրահայում նախարարները (այժմ արդեն 33) համաձայնեցին

- օժանդակել հարատև կրթության ռազմավարությանը,
- Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի ստեղծման գործընթացում ճանաչել բարձրագույն կրթությունը և ուսանողներին որպես գործընկերներ և
- խթանել Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի գրավչության բարձրացմանն աշխարհի այլ երկրների համար:

2003թ. Բեռլինում նախարարները (այժմ արդեն 40) ընդունեցին իրենց երկրներում բարձրագույն կրթության և գիտահետազոտական համակարգերի միջև կապերի սերտացման կարևորությունը (Տե՛ս Հավելված, Աղյուսակ 1բ): Նրանք համաձայնության եկան, որ Բարձրագույն կրթության եվրոպական տարածքը շահեկանորեն կօգտվի Եվրոպական Հետազոտական Տարածքի հետ համագործակցելիս՝ ներառելով դոկտորի աստիճանի փուլը, որպես Բոլոնիայի գործընթացի երրորդ փուլ: Հանդիպման ժամանակ նախարարները նաև կարևորեցին բարձրագույն կրթության քաղաքականության սոցիալական ուղղվածությունը:

2005թ. Բերգենում (Նորվեգիա) նախարարները կատարեցին առաջնային գործողությունների միջնաժամկետ գնահատում: Որպես հիմնահարցեր ընտրվեցին

²⁰The Magna Charta Universitatum signed in Bologna in 1988. www.magna-charta.org

կրթական աստիճանների համակարգը, որակի ապահովումը և կրթական աստիճանների ու ուսման ժամանակահատվածի ճանաչումը (Տե՛ս Հավելված, Աղյուսակ 1գ): Բարձրագույն կրթության և գիտահետազոտական համակարգերի միջև կապերի զարգացումը, Բարձրագույն կրթության եվրոպական տարածքի գրավչության բարձրացումը և սոցիալական ուղղվածությունը, շարժունությունը և այլ երկրների հետ համագործակցությունը համարվեց որպես հետագա մարտահրավերներ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Բոլոնիայի գործընթացը հիմնականում միջկառավարական է՝ դրա որոշումները պարտադիր բնույթ չեն կրում: Բոլոնիայի գործընթացը ուղղակի նպատակ չի հետապնդում փոփոխել ազգային բարձրագույն կրթությունը: Ավելին, Բոլոնիայի գործընթացը չի փորձում փոփոխել համալսարանների կարգավիճակը, նպատակ չի հետապնդում փոփոխել պետություն-համալսարան փոխհարաբերությունները և չի սահմանում, թե ինչպես պետք է բաշխվեն միջոցները:

5.1 Հայաստանի բարձրագույն կրթական համակարգը և դրա ինտեգրումը եվրոպականին

1991թ. անկախությունից հետո Հայաստանի կրթական համակարգը ենթարկվել է զգալի փոփոխությունների: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածը վկայում է, որ Հայաստանի բոլոր քաղաքացիները ունեն կրթության իրավունք, միջնակարգ կրթությունը պետական դպրոցներում անվճար է, և յուրաքանչյուր քաղաքացի մրցակցային հիմունքներով իրավունք ունի ստանալու բարձրագույն կրթություն պետական կրթական ինստիտուտներում:

ՀՀ կրթական ոլորտում ընթացող բարեփոխումների պայմաններում կառավարության վերջնական նպատակը պետք է լինի.

- **Բավարարել հանրության, պետության և տնտեսության պահանջմունքները:** Քանի որ այսօր հանրապետությունում առկա են ինչպես պետական, այնպես էլ մասնավոր ԲՈՒՀ-եր, ապա այստեղ շատ հնարավոր է, որ տեղի ունենա գործունեության խիստ տարբերակում: Այսպես, ելնելով մրցակցային հիմունքներից, մասնավոր բուհերը հիմնականում կարող են կենտրոնանալ հանրության և տնտեսության կարիքների բավարարման վրա: Մյուս կողմից պետական ԲՈՒՀ-երը կարող են կենտրոնանալ պետության կարիքների բավարարման վրա, միևնույն ժամանակ, կրկին ելնելով մրցակցային հիմունքներից, պետք է հնարավորինս մեծ ուշադրություն դարձվի հանրության և տնտեսության պահանջմունքների վրա:

- **Կողմնորոշվել դեպի հանրության կրթական պահանջումները:** Սա իրականում նշանակում է տարբեր սոցիալական ոլորտների բնակչության, խմբերի և ընկերակցությունների պահանջարկի բավարարում՝ ելնելով ազգային և տարածաշրջանային առանձնահատկություններից:
- **Հետևել ամբողջ կրթական համակարգի զարգացման միտումներին և գործընթացներին:** Այստեղ հարկ է նշել, որ մի կողմից պետք է հաշվի առնել Հայաստանի կրթական համակարգի ավանդույթները, իսկ մյուս կողմից՝ համաշխարհային միտումները, դրանց ազդեցությունը տեղական կրթական համակարգի վրա և տեղական արձագանքն այդ գործընթացներին:

2007թ. տվյալներով Հայաստանում գործում են տասնութ պետական բարձրագույն ուսումնական հաստատություն՝ իրենց տասնչորս տարածաշրջանային մասնաճյուղերով, որոնք մատուցում են բարձրագույն և ետբուհական կրթություն ավելի քան 59 հազ. ուսանողի: Պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում հաստիքային դասախոսական անձնակազմի թիվը կազմում է 6300, իսկ միջին ուսանող/դասախոսական անձնակազմ հարաբերությունը՝ 8-9: Վերջին տասնամյակում ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների թիվը զգալի ավելացել է՝ հասնելով 72-ի, որտեղ սովորում են ավելի քան 22 հազ. ուսանող: Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններում հաստիքային դասախոսական անձնակազմի թիվը կազմում է 1800, իսկ միջին ուսանող/դասախոսական անձնակազմ հարաբերությունը՝ 9-10: Ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները ամբողջությամբ կախված են ուսման վճարներից (եկամտի 90%), մինչդեռ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններն ունեն միջոցների տարբերակված աղբյուրներ: Այսպես, պետական բյուջեից ֆինանսավորում (30%), ուսման վճարներ (50%) և այլ աղբյուրներ (20%):

Վերջին տարիներին եվրոպական գործընթացները դարձել են շոշափելի իրականություն եվրոպական երկրների և դրանց քաղաքացիների համար: Հայաստանն (2001թ.), անդամակցելով Եվրոպայի խորհրդին, հաստատեց եվրոպական գործընթացներին մասնակցելու իր պարտավորությունները և ցանկությունն իրականացնել բոլոր անհրաժեշտ բարեփոխումները՝ լիիրավ անդամ դառնալու համար: Ներկայումս կրթական համակարգի միջազգայանցումը դարձել է շատ եվրոպական երկրների հիմնական նպատակներից մեկը: Բնականաբար Հայաստանը չի կարող դուրս մնալ կրթական համակարգում առկա միջազգային

մրցակցությունից: Այդ պատճառով Հայաստանը պետք է ուժեղացնի իր միջազգային մրցունակությունը կրթական համակարգում, որը նաև հանդիսանում է որպես ընդհանուր տնտեսական մրցունակության մի մաս:

Բոլոնիայի գործընթացի սկզբունքների կիրառման իրավական պայմանները հաստատվել են Կրթության օրենքով (1999թ.), Բարձրագույն կրթության ռազմավարությամբ (2002թ. հաստատված կառավարության կողմից) և Բարձրագույն և ետբուհական կրթության օրենքով (2004թ. Ազգային ժողովի կողմից ընդունված):

2004թ. մայիսի 18-ին Ստրասբուրգում Հարավային Կովկասի (Հայաստան, Վրաստան, Ադրբեյջան) բարձրագույն կրթության նախարարները իրենց ցանկությունն արտահայտեցին՝ անդամակցելու Բոլոնիայի գործընթացին: Բարեփոխումները բարձրագույն կրթության ոլորտում կազմում են անդամակցության գործընթացի կարևորագույն մասը: Նախարարները պարտավորվեցին ընդունել բարձրագույն կրթության նոր օրենսդրություն, որը կհամապատասխանի եվրոպական նորմերին ու ստանդարտներին և, ելնելով Բոլոնիայի գործընթացի պահանջներից, կատարել բարեփոխումներ բարձրագույն կրթության ոլորտում:

Արդյունքում 2005թ. Հայաստանն անդամակցեց Բոլոնիայի գործընթացին (Տե՛ս Հավելված, Աղյուսակ 2): Այդ կապակցությամբ Հայաստանը պարտավորվել է կատարել բարեփոխումներ ոչ միայն բարձրագույն կրթության ոլորտում, այլ ամբողջ կրթական համակարգում: 2005թ. ի վեր Հայաստանի կառավարությունը, Կրթության և գիտության նախարարությունը և բարձրագույն ուսումնական հաստատությունները ներմուծում են երկաստիճան կրթական համակարգ, կրեդիտների փոխանցման և հավաքման համակարգ, դիպլոմի միջուկի համակարգ, ընդլայնվել են դոկտորական ծրագրերը՝ բարձրագույն կրթության և գիտահետազոտական համակարգի միջև կապ ստեղծելու համար: Պատրաստվում է նաև ստեղծել կրթության որակի ճանաչման մարմին և որակի ապահովման գործակալություն:

Դիտարկենք, թե Բոլոնիայի հռչակագրի վեց հիմնադրույթները ինչպես են կիրառվում Հայաստանում:

1. *«Դ-յուրընթեռնելի և համեմատելի» կրթական աստիճանների համակարգի ընդունում:* 2005թ. մայիսին կառավարության կողմից ստեղծվեց հայկական ENIC/NARIC²¹-ը՝ ազգային և կազմակերպական մակարդակներում կրթության որակի օբյեկտիվ ճանաչման համակարգին խթանելու համար: Եվրոպական համակարգը ոսումնասիրելուց հետո մշակվեց դիպլոմի միջուկի հայկական տարբերակը: Դ-իպլոմի

²¹ European Network of Information Centers, ENIC/ National Academic Recognition Information Centres, NARIC

միջուկի հայկական տարբերակը ներկայումս քննարկվում է Կրթության և գիտության նախարարության ու բարձրագույն ուսումնական հաստատությունների կողմից: Համաձայն Հայաստանի կառավարության կողմից հաստատված ժամանակացույցի՝ բարձագույն ուսումնական հաստատությունների կողմից դիպլոմի միջուկը պետք է պաշտոնապես թողարկվեր 2007թ.:

2. Երկաստիճան կրթական համակարգի կիրառում: 2004թ. Բարձրագույն կրթության և ետբուհական օրենքով սահմանվեց երկու փուլերի վրա հիմնված բարձրագույն կրթության համակարգ (բակալավրիատ/մագիստրատուրա): Կառավարությունը սահմանեց, որ բոլոր պետական ԲՈՒՀ-երը ներկայացնեն բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրեր: Նախատեսվում է, որ մինչև 2010թ. բոլոր համալսարանները (ներառյալ մասնավոր) պետք է հիմնվեն երկաստիճան կրթական համակարգի վրա: Օրինակ՝ Պետական ճարտարագիտական համալսարանը ներմուծել է երկաստիճան կրթական համակարգը 1992թ., Գյուղատնտեսական ակադեմիան՝ 1999թ., Երևանի պետական համալսարանը՝ 2000թ. և այլն:

3. Կրեդիտային համակարգի հիմնում: 2005թ. դեկտեմբերին կառավարությունը հատուկ որոշում ընդունեց կրեդիտային համակարգի ներմուծման վերաբերյալ: Համաձայն այդ որոշման՝ վեց պետական համալսարանները պետք է սկսեն կիրառել կրեդիտային համակարգ փուլ առ փուլ: Արդյունքում, Պետական ճարտարագիտական համալսարանը մագիստրատուրայի իր ծրագրերում կրեդիտային համակարգի կիրառման արդեն 4 տարվա փորձ ունի, Երևանի լեզվաբանական համալսարանը բակալավրիատում և մագիստրատուրայում մեկ ուսումնական ծրագրի համար ներմուծել է կրեդիտային համակարգ: Մյուս չորս պետական համալսարանները վերանայում են իրենց ուսումնական ծրագրերը՝ համաձայն կրեդիտային համակարգի պահանջների: Ընդհանուր առմամբ, բոլոր վեց համալսարանները համատեղ աշխատանքներ են իրականացնում կրեդիտային համակարգի ներդրաման համար:

Միաժամանակ Կրթության և գիտության նախարարությունը կազմել է աշխատանքային խումբ, որը պետք է ազգային մակարդակում խթանի Կրեդիտների փոխանցման եվրոպական համակարգին (European Credit Transfer System, ECTS), պատրաստի ուղեցույց, թե ինչպես կիրառել ECTS-ը և կազմակերպի թրեմինգ համալսարանների ECTS-ի համակարգողների համար: ECTS-ի ուղեցույցը թարգմանվել է և ներկայումս գտնվում է հրապարակման փուլում:

4. Շարժունության խթանում: Ուսանողների և դասախոսական անձնակազմի միջև շարժունությունը շատ ցածր է, քանի որ կան իրավական և ծրագրային

խոչընդոտներ: Առկա ակադեմիական ծրագրերը հատուկ կառավարության որոշումներով խստորեն կարգավորում են ուսանողների փոխանակումը մի մասնագիտությունից մյուսը, որը շատ լուրջ խոչընդոտ է հանդիսանում շարժունության խթանման գործընթացում: Կրթության և գիտության նախարարությունը խրախուսում է բարձրագույն ուսումնական հաստատությունների միջև համագործակցությունը: Համաձայն վիճակագրական տվյալների՝ յուրաքանչյուր տարի համալսարանների դասախոսական անձնակազմի և ուսանողների միայն 10%-ն է ներառվում տարբեր շարժունության ծրագրերում: Այսպես, 2005թ. արտասահմանում կրթություն ստացողների թիվը կազմել է 4,269 ուսանող, այդ թվում դրանցից 1183-ը սովորում են Եվրոպայում (հիմնականում Գերմանիա և Ֆրանսիա), իսկ մնացածը՝ այլ երկրներում²²: Այստեղ հարկ է նշել, որ միայն Ռուսաստանին բաժին է ընկնում արտասահմանում սովորող հայ ուսանողների 37% (1582 ուսանող):

5. Որակի ապահովման եվրոպական համագործակցության խթանում: Հայաստանում գործող կրթություն տրամադրող բոլոր ինստիտուտները պետք է արտոնագրվեն: Արտոնագրման համակարգը հավասար հնարավորություններ է ընձեռնում պետական և մասնավոր ինստիտուտներին: Բարձրագույն կրթության և ետբուհական օրենքի համաձայն՝ Կրթության և գիտության նախարարության կազմում ստեղծվել է հատուկ մարմին, որը զբաղվում է մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունների արտոնագրմամբ և հավատարմագրմամբ՝ Արտոնագրման և հավատարմագրման ծառայություն(2000թ.): Արտոնագրերի և հավատարմագրերի հետ կապված բոլոր որոշումները կատարվում են նախարարի կողմից: Կրթության և գիտության նախարարության կողմից ստեղծվել է նաև աշխատանքային խումբ, որը համաձայն եվրոպական խորհրդատվության՝ պետք է մշակի որակի ապահովման ազգային համակարգ: Վերջնական արդյունքում նախատեսվում է ստեղծել որակի ապահովման անկախ գործակալություն:

6. Խթանել Բարձրագույն կրթության եվրոպական ուղղվածությանը: Հայաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները ակտիվորեն մասնակցում են եվրոպական ծրագրերին (TEMPUS, INTAS և այլն), որոնց վերջնական նպատակն է խթանել կրթական որակի բարձրացմանը և օժանդակել ինստիտուցիոնալ զարգացմանը: Եվրոպական ծրագրերի շրջանակներում որոշ համալսարաններում ստեղծվեցին նոր հետազոտական կենտրոններ, իսկ դրանց անձնակազմը ներառվեց կրթական գործընթացում: «TEMPUS» ծրագիրը Հայաստանում գործում է 1995թ.-ից ի

²² OECD, Education at a Glance 2007, Table C3.8

վեր: Այս ժամանակահատվածում, ծրագրի շրջանակներում իրականացվել է 92 նախագիծ՝ ներառյալ 60 անհատական ծրագիր: Հայաստանի համար հատկապես կարևորություն են ստանում Բոլոնիայի գործընթացի շրջանակներում իրականացվելիք ծրագրերը, որի համար անհրաժեշտ է կրթական բարեփոխումներ կատարել և համագործակցություն ստեղծել եվրոպական համալսարանների հետ: Եվրոպական համալսարանների հետ համագործակցությունը հայկական բուհերին հնարավորություն է տալիս նորովի գնահատել իրենց, ձգտել բարձրացնել դասախոսական կազմի որակավորումը և ուսանողների գիտելիքների մակարդակը: Այս առումով «TEMPUS»-ի նախագծերը շատ կարևոր են եվրոպական գործընկերների հետ համագործակցություն հաստատելու համար: Այս համատեքստում TEMPUS-ը հնարավորություն է տալիս ուսուցման և կառավարման նոր մեթոդներ ներդնել՝ կիրառելով նորագույն տեխնոլոգիաները: Իհարկե, շատ կարևոր է այս կրթական ծրագրերի իրականացումը, քանի որ դասախոսների որակավորման բարձրացումն արտացոլվելու է նաև դասավանդման որակի վրա: Այդ պատճառով անհրաժեշտ է հարթել համալսարանում գործող համապատասխան կառույցների գործունեությունը, որպեսզի ծրագիրն ավարտելուց հետո ֆինանսավորման բացակայությունը չդադարեցնի այս ծրագրի գործողությունը և ուսումնական հաստատության զարգացման գործընթացը: Մինչև 2007թ. վերջը մեկնարկելու է «TEMPUS» ծրագրի նոր փուլը՝ «TEMPUS-4» –ը, որը նախատեսվում է 2008-2013թթ.: «TEMPUS-4» ծրագրի շրջանակներում Հայաստանին ամեն տարի հատկացվելու է 1 մլն. եվրո՝ բարձրագույն կրթության ոլորտում ամենատարբեր դրամաշնորհային նախագծերի իրականացման համար:

5.2 Բոլոնիայի գործընթացի գնահատումն ուսանողների հայացքով

Նպատակ ունենալով զերծ մնալ կրթական համակարգի՝ Բոլոնիայի գործընթացի ներքո, բարեփոխումների միայն պաշտոնական մասի վերլուծությունից, որոշում ընդունվեց գնահատել նաև կրթական գործընթացի բուն մասնակիցների՝ ուսանողների, կարծիքը նոր համակարգի ներդրման վերաբերյալ:


Ընդհանուր տեղեկություններ հարցման վերաբերյալ: Տվյալ աշխատանքի շրջանակներում կազմակերպվել է հարցումներ երկու ԲՈՒՀ-ում՝ Երեվանի պետական համալսարանում և Հայ-ռուսական պետական համալսարանում²³: Հարցմանը մասնակցել են ավելի քան 190 ուսանող, ինչը կազմում է երկու համալսարաններում

²³ Հարցումների կազմակերպմանը, տվյալների մուտքագրմանը և մշակմանը, ինչպես նաև արդյունքների վերլուծությանը մասնակցել են ԵՊՀ Տնտեսագիտական ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողներ Իրինա Արզումանյանը և Սեդա Ղազախեցյանը:

կրեդիտային համակարգով սովորող ուսանողների 13.2%: Այս առումով ընտրանքը ներկայացուցչական է երկու համալսարանների ընդհանուր մակարդակով: Այստեղ հարկ է նշել, որ Երևանի պետական համալսարանում կրեդիտային համակարգը կիրառվում է միայն մագիստրատուրայում, իսկ Հայ-ռուսական պետական համալսարանում, ինչպես բակալավրիատում, այնպես էլ մագիստրատուրայում: Հարցմանը մասնակցած ուսանողների սեռական բաշխումը մի փոքր շեղված է դեպի իգական սեռի ներկայացուցիչները՝ 67.2%, մինչդեռ պետական ԲՈՒՀ-երում սովորող ընդհանուր իգական/արական սեռերի հարաբերակցությունը կազմում է համապատասխանաբար 51.8% և 46.9%: Տարիքային կառուցվածքի առումով հարցվածների 52.5% կազմել են 16-20 տարեկան ուսանողները, իսկ 47.4% կազմել են 21-25 տարեկան ուղանողները: Հարցմանը մասնակցած բոլոր ուսանողների 49.7% բակալավրիատի ուսանող են, իսկ 50.2%՝ մագիստրատուրայի, ընդ որում մագիստրատուրայի ուսանողները հիմնականում ԵՊՀ-ից են, իսկ բակալավրիատի ուսանողները՝ ՌՀՊՀ-ից: Ուսանողների 30.3% սովորում է պետապատվերով, իսկ 69.6%՝ վճարովի հիմունքներով:

Վճարովի հիմունքներով սովորող ուսանողների մեծամասնությունը (41.1%) տարեկան վճարում է 1500-2000, 33%՝ 1000-15000, իսկ 14.2% ավելի քան 2000 ԱՄՆ դոլարին համարժեք գումար (Տե՛ս Գ-ծապատկեր 1):


Գծապատկեր 1: Վճարովի համակարգով սովորող ուսանողների ուսման վարձերի մեծության բաշխվածությունը



ՀՀ բարձրագույն ուսումնական համակարգի ընդհանուր բնութագիրը: Հարցմանը մասնակցած ուղանողների 42.0% կարծում է, որ ՀՀ բարձրագույն կրթական համակարգն այլ երկրների հետ համեմատած մրցունակ է շնորհիվ իր բարձր կրթական

որակի (Տե՛ս Գծապատկեր 2), իսկ 21.6% գտնում է, որ մրցունակության հիմնական գործոնը ուսման մատչելի գինն է: Միևնույն ժամանակ ուսանողների 36.4% գտնում է, որ ՀՀ բարձրագույն կրթական համակարգը մրցունակ չէ:

Գծապատկեր 2: ՀՀ բարձրագույն կրթական համակարգի մրցունակության հիմնական գործոնները



Միևնույն ժամանակ կարևոր է ընդգծել որ ուսանողները բուհական համակարգի զարգացման գործում շարունակում են մեծ դերակատարում տալ պետության դերին, չնայած նրանց մեծամասնությունը գտնում է որ ԲՈՒՀ-երը պետք է ազատ լինեն իրենց քաղաքականության սահմանման գործում: Այսպես, այն հարցին, թե ինչպիսի դեր պետք է ունենա ուսանողների կողմից ստացվող վարձավճարները ԲՈՒՀ-երի գործունեության ֆինանսավորման գործում հարցմանը մասնակցած 190 ուսանողներից 13.7% գտնում է, որ վարձավճարները պետք է հանդիսանան հիմնական աղբյուր, իսկ 86.2% համաձայնվել է, որ վարձավճարները պետք է հանդիսանան միայն լրացուցիչ աղբյուր: Այստեղ հարկ է նշել, որ Հայաստանի դեպքում մասնավոր ԲՈՒՀ-ը գրեթե 90.0%-ով հիմնվում են ուսման վճարների վրա, իսկ պետական ԲՈՒՀ-ում վիճակը փոքր ինչ մեղմ է (50.0%): Ավելին, Հայաստանի բարձրագույն կրթական համակարգում և գիտահետազոտական աշխատանքների համակարգում զգալի փոքր է մասնավոր աղբյուրներից ստացվող ֆինանսավորումը (2005թ. տվյալներով այն կազմել է մոտ 200 հազ. դոլար):

Հարցմանը մասնակցած ուսանողների 44.6% գտնում է, որ պետությունը պետք է ակտիվ դեր կատարի ԲՈՒՀ-ական համակարգի կարգավորման գործում, այսինքն՝ հստակորեն սահմանի բարձրագույն կրթության համակարգի չափորոշիչները և սահմանի ԲՈՒՀ-երի զարգացման ռազմավարությունը: Հակառակ դրան, ուսանողների


55.3% գտնում է, որ պետությունը պետք է ԲՈՒՀ-ական համակարգի կարգավորման գործում պասիվ դեր կատարի, այսինքն՝ ստեղծի «խաղի կանոններ» ԲՈՒՀ-երի համար, իսկ ԲՈՒՀ-երի զարգացման ռազմավարությունը պետք է որոշվի ԲՈՒՀ-երի կողմից: Այստեղ հարկ է նշել, որ ըստ 2007թ. «Eurobarometer»-ի կողմից իրկանացված հարցման արդյունքների, որին մասնակցել են պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը (5782 մարդ), հարցման մասնակցածների ավելի քան 75.0% գտնում է, որ համալսարանները պետք է ավելի անկախ լինեն պետական կառավարման մարմիններից:

Ավելին, ինչ վերաբերում է ԲՈՒՀ-երի ազատության հիմնախնդրին, ապա այս առումով գնահատականները տարբեր են՝ կախված խնդրո առարկայից: Այսպես, եթե հարցվածքների մեծամասնությունը գտնում է, որ ԲՈՒՀ-երը պետք է ինքնուրույն որոշեն ուսումնական ծրագրերի բովանդակությունը (78.0%), ավարտական պահանջները (62.0%) և ուսանողների ընտրության քաղաքականությունը (57.0%), ապա միայն 15.0%-ն են համաձայն այն մտքի հետ, որ ԲՈՒՀ-երը ինքնուրույն որոշեն իրենց վարձավճարների մեծությունները (Տե՛ս Գծապատկեր 3): Ամենայն հավանականությամբ, ուսանողների զգալի մասն այն կարծիքին է, որ ԲՈՒՀ-երը, ելնելով աշխատուժի շուկայի պահանջներից և շուկայի մրցակցային պայմաններից, պետք է ինքնուրույն որոշեն ավարտական պահանջները և կազմեն ուսումնական ծրագրերը, սակայն նրանք մտավախություն ունեն, որ վարձավճարները սահմանելիս ԲՈՒՀ-երը կարող են անհիմն բարձր գներ սահմանեն: Հարկ է նշել, որ նման մոտեցումը կարող է պայմանավորված լինել երկու գործոններով.

Նախ, չնայած ուսանողները գտնում են, որ համակարգի ԲՈՒՀ-երի միջև առկա է մրցակություն, նրանք մտավախություն ունեն, որ դրանք գալով համաձայնության կասահմանեն չհիմնավորված բարձր գներ, և

երկրորդ պատճառը կարող է լինել այն, որ հարցվածներն ուղղակի չեն կարևորում մրցակցության դերը գնագոյացման համակարգում:


Գծապատկեր 3: ԲՈՒՀ-երին պետք է ազատություն տրվի հետևյալ ոլորտներում



Բոլոնիայի գործընթացը ուսանողների տեսանկյունից: Հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնությունը (40.0%) «Բոլոնիայի գործընթաց» բառակապակցությունը հանդիպելիս անմիջապես մտաբերում են կրթության համակարգի եվրոպականացման գործընթացը (Տե՛ս Գծապատկեր 4): Միևնույն ժամանակ ուսանողների զգալի մասը (35.0%) անմիջապես մտաբերում է կրեդիտային համակարգին անցման գործընթացը, 18.0% այն դիտարկում է, որպես բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումներ: Ընդհանուր առմամբ գնահատականները


ցույց են տալիս որ ուսանողները ըմբռնում են Բոլոնիայի գործընթացի հիմնական տարրերի նպատակները:

Գծապատկեր 4: Առաջին հերթին ինչ եք մտաբերում «Բոլոնիայի գործընթաց» բառակապակցությանը հանդիպելիս




Սակայն ուսանողների մեծամասնությունը (44.0%) կարծում է, որ շատ ավելի լավ կլիներ, եթե հին կրթական համակարգը պահպանվեր (առանց բակալավրիատ և մագիստրատուրա տարանջատման) (Տե՛ս Գծապատկեր 5): Այստեղ նույնպես շատ հետաքրքիր պատկեր ենք ստացել, քանի որ ուսանողների մեծամասնությունը հենց ի սկզբանե սովորել են նոր կրթական համակարգով (երկաստիճան) և հայտնի չէ, թե այդ դեպքում ինչպես են նրանք կարողանում համեմատել հին համակարգը նորի հետ և տալ նախապատվությունը հին համակարգին: Ամենայն հավանականությամբ այս մոտեցումը փոփոխությունների նկատմամբ մարդկանց զգուշության արդյունք է: Համեմատության համար հարկ է նշել, որ ըստ 2007թ. «Eurobarometer»-ի կողմից իրկանացված հարցման արդյունքների, որին մասնակցել են պրոֆեսորա-դասախոսական անձնակազմը (5782 մարդ), հարցմանը մասնակցածների ավելի քան կեսը գտնում են՝ եռաստիճան կրթական համակարգը կբարելավի կամ արդեն բարելավել է կրթության որակը: Այնուամենայնիվ, Եվրոպայում նույնպես 32.0% գտնում է, որ շատ ավելի լավ կլիներ, եթե հին կրթական համակարգը պահպանվեր: Ամեն դեպքում, մեր կարծիքով, յուրաքանչյուր համալսարան պետք է աշխատանքներ կատարի այս ոլորտում, որպեսզի և՛ բակալավրիատում (հետագայում առանց մագիստրատուրայի), և՛ մագիստրատուրայում սովորող ուսանողները կարողանան ավելի հստակ պատկերացնել փոփոխությունների անհրաժեշտությունը և դրանց դրական կողմերը:

Գծապատկեր 5: Ացանկանայիք արդյոք, որ հին կրթական համակարգը պահպանվեր




Հարցմանը մասնակցած ուսանողների գրեթե կեսը գտնում է, որ երկաստիճան կրթական համակարգը խթանում է ուսման որակի բարձրացմանը և մոտեցնում է մեր կրթական համակարգը Եվրոպականին (Տե՛ս Գծապատկեր 6): Մյուս կողմից ուսանողների 19.0% համոզված է, որ երկաստիճան կրթական համակարգը ընդամենը երկարացնում է ուսման տևողությունը: Սա մատնանշում է, որ դեռևս զգալի աշխատանքներ պետք է կատարվեն մագիստրատուրայի ուսումնական պլանների և ծրագրերի մշակման գործում՝ դրանց պահանջված խորությունն ապահովելու նպատակով: Հակառակ դեպքում, ուսանողների մոտ կշարունակվի մնալ այն թյուր տպավորությունը, որ մագիստրատուրան դա ուղղակի ուսման տևողության արհեստական երկարացում է:

Գծապատկեր 6: Երկաստիճան կրթական համակարգի ներմուծման հիմնական նպատակները




Անդրադառնալով կրեդիտային համակարգի ներդրման նպակատակներին պետք է ընդգծել, որ ուսանողները ընդհանուր առմամբ ըմբռնում են նոր մոտեցման հիմնական խնդիրները (Տե՛ս Գծապատկեր 7):

Գծապատկեր 7: Կրեդիտային համակարգի հիմնական նպատակն է




Հարցմանը մասնակցած ուսանողների մեծամասնությունը (55.2%) կարծում է, որ մագիստրատուրան հնարավորություն է տալիս խորացնել մասնագիտացման աստիճանը, իսկ 43.2% կարծիքով մագիստրատուրան հնարավորություն է տալիս ավելի խորացնել բակալավրիատում ստացված գիտելիքները՝ ավելի շատ շեշտադրելով գիտահետազոտական աշխատանքը (Տե՛ս Գծապատկեր 8): Սակայն, ուսանողների 1/3-ը այն մտքին է, որ մագիստրատուրան նախապայման է լրիվ բարձրագույն կրթություն ունենալու համար: Մինչդեռ Բոլոնիայի գործընթացի համաձայն բակալավրիատը համարվում է լրիվ բարձրագույն կրթություն: Այս առումով կարևոր է ընդգծել, որ միևնույն մոտեցումը ցուցաբերվում է նաև աշխատուժի շուկայում, ուստի ուսանողների նման մոտեցումն ուղղակի արձագանք է գործատուների կողմից տարվող քաղաքականության նկատմամբ:

Գծապատկեր 8: Մագիստրատուրան հնարավորություն է տալիս



ԲՈՒՀ-երի գործունեության և մասնավորապես՝ դասավանդման որակի համար ուսանողների մեծամասնության (43.0%) կարծիքով պետք է պատասխանատու լինեն ԲՈՒՀ-երը: Մյուս կողմից ուսանողների 37.0% կարծիքով որակի վերահսկման համար պետք է ստեղծվեն անկախ պետական մարմիններ:

Գծապատկեր 9: Ովքեր են պատասխանատու ԲՈՒՀ-երի գործունեության և դասավանդման որակի համար




Ավելին, կրթության ոլորտում որակի և ստանդարտների բարելավման համար ուսանողների զգալի մասը գտնում է (48%.0), որ պետք է մշակվի և կիրառվի սեփական ստանդարտները (Տե՛ս Գծապատկեր 9), 37.0% կարծում է, որ պետք է անցնել

եվրոպական որակի ստանդարտներին, իսկ 15.0% դժվարացել է պատասխանել: Մեր կարծիքով, շատ լավ կլիներ մշակել և կիրառել սեփական ստանդարտներ, սակայն ներկայումս կրթական ոլորտում ընթացող վերազգայնացման գործընթացում անհրաժեշտ է տեղական պահանջներին հարմարեցնել և կիրառել եվրոպական որակի ստանդարտները՝ մրցակցությանը դիմակայելու և այդ գործընթացներից դուրս չմնալու համար:

Ուսումնական գործընթացի վրա ազդող այլ գործոններ: Հարցմանը մասնակցած ուսանողների 52.0% պատրաստ չէ ավել վճարել որակյալ կրթություն ստանալու համար (Տե՛ս Գծապատկեր 10): Այստեղ կարելի է կատարել երկու հետևություն. Հայաստանի պայմաններում ուսանողների մեծամասնությունն ուղղակի նյութապես ի վիճակի չէ վճարել որակյալ կրթություն ստանալու համար, կամ էլ ուսանողները գտնում են, որ իրենց ստացած կրթության որակն այդքան էլ էական չէ հետագայում Հայաստանում աշխատանքի անցնելու համար: Սակայն անհրաժեշտ է ընդգծել, որ ուսանողների ոչ պակաս զանգված՝ 48.0%, պատրաստ է ավել վճարել ավելի բարձր որակի կրթություն ստանալու համար: Սա ցույց է տալիս, որ կրթական ծառայությունների ոլորտում դեռևս գոյություն ունի բարձրարժեք և որակյալ կրթություն տրամադրող ուսումնական հաստատությունների ազատ խորշ:


Գծապատկեր 10: Որքան եք պատրաստ վճարել որակյալ կրթություն ստանալու համար /ավել քան ներկայումս վճարում եք/



Ինչպես նկատում ենք Գծապատկեր 11-ից, ուսանողների գերակշիռ մասն (51.7%) այն մտքին է, որ ԲՈՒՀ-երն առնվազն մասամբ հաշվի են առնում աշխատուժի


շուկայի կողմից մասնագետների գիտելիքների նկատմամբ պահանջները, և միայն 29.7% է գտնում, որ ընդհանրապես հաշվի չեն առնում:

Գծապատկեր 11: Ձեր կարծիքով, ներկայումս ԲՈՒՀ-երը հաշվի են առնում աշխատուժի շուկայի կողմից մասնագետների գիտելիքների նկատմամբ պահանջները, եթե այո, ապա որքանով



Ինչ վերաբերում է ուսանողների շարժունությանը, ապա հարցմանը մասնակցած ուսանողների միայն 11.5% է սովորել արտասահմանում (Տե՛ս Գծապատկեր 12), այդ թվում նրանցից մոտ 7.0% արտասահմանում սովորել են անհատական նախաձեռնությամբ, իսկ 3.5% միջբուհական համաձայնագրերի հիման վրա: Սա ակնհայտորեն վկայում է շարժունության ցածր մակարդակի մասին:


Գծապատկեր 12: Երբևէ սովորե՞լ եք արտասահմանում



Բացի այդ ուսանողների մեծամասնությունը (45.0%) գտնում է, որ բացի ֆինանսական միջոցներից, արտասահմանում սովորելու գործընթացի վրա մեծապես

ազդում է այդ ոլորտում առկա տեղեկատվության պակասը (Տե՛ս Գծապատկեր 13): Միաժամանակ, ուսանողների 30.0% գտնում է, որ արտասահմանում սովորելու համար խոչընդոտ է հանդիսանում լեզվի իմացությունը, իսկ 22.0% խոչընդոտ է համարում նաև մեծածավալ թղթաբանությունը:

Գծապատկեր 13: Ինչպիսի՞ գործոններ են, բացի ֆինանսական միջոցներից, մեծապես դժվարեցնում արտասահմանում սովորելու գործընթացը



Այսպիսով, ամփոփելով հարցման արդյունքները կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

Ուսանողների կողմից ստացվող վարձավճարները ԲՈՒՀ-երի գործունեության ֆինանսավորման գործում պետք է հանդիսանան միայն լրացուցիչ աղբյուր, այն դեպքում, երբ Հայաստանում դրանք ընդհանուր առմամբ հանդիսանում են որպես հիմնական աղբյուր:

Ուսանողները բուհական համակարգի զարգացման գործում շարունակում են մեծ դերակատարում տալ պետության դերին, չնայած նրանց մեծամասնությունը գտնում է որ ԲՈՒՀ-երը պետք է ազատ լինեն իրենց քաղաքականության սահմանման գործում: Այսպես, պետությունը պետք է ԲՈՒՀ-ական համակարգի կարգավորման գործում «պասիվ» դեր կատարի, այսինքն՝ ստեղծի «խաղի կանոններ» ԲՈՒՀ-երի համար, իսկ ԲՈՒՀ-երի զարգացման ռազմավարությունը պետք է որոշվի ԲՈՒՀ-երի կողմից:

ԲՈՒՀ-երը պետք է ինքնուրույն որոշեն ուսումնական ծրագրերի բովանդակությունը, ավարտական պահանջները և ուսանողների ընտրության քաղաքականությունը, սակայն ԲՈՒՀ-երին չպետք է ազատություն տրվի ուսման

վարձավճարների որոշման գործընթացում: Միգուցե ուսանողները գտնում են, որ պետության միջամտությունն ու կարգավորումն այստեղ անհրաժեշտ է, քանի որ նրանք մտավախություն ունեն, որ ուսման վարձավճաները սահմանելիս ԲՈՒՀ-երը կարող են անհիմն բարձր գներ սահմանել:

Չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր առմամբ ուսանողները ըմբռնում են Բոլոնիայի գործընթացի հիմնական նպատակները, ուսանողների մեծամասնությունը կարծում է, որ շատ ավելի լավ կլիներ, եթե հին կրթական համակարգը պահպանվեր (առանց բակալավրիատ և մագիստրատուրա տարանջատման): Հնարավոր է, որ այս մոտեցումը փոփոխությունների նկատմամբ մարդկանց զգուշության արդյունք է: Ամեն դեպքում, մեր կարծիքով, յուրաքանչյուր համալսարան պետք է աշխատանքներ կատարի այս ոլորտում, որպեսզի և՛ բակալավրիատում (հետագայում առանց մագիստրատուրայի), և՛ մագիստրատուրայում սովորող ուսանողները կարողանան ավելի հստակ պատկերացնել փոփոխությունների անհրաժեշտությունը և դրանց դրական կողմերը:

Ուսանողների 1/3 կարծում է, որ մագիստրատուրան նախապայման է հանդիսանում լրիվ բարձրագույն կրթություն ունենալու համար: Մինչդեռ Բոլոնիայի գործընթացի համաձայն բակալավրիատը համարվում է լրիվ բարձրագույն կրթություն: Այստեղ հարկ է նշել, որ միևնույն մոտեցումը առկա է նաև աշխատուժի շուկայում, ուստի ուսանողների նման մոտեցումն ուղղակի արձագանք է գործատուների կողմից տարվող քաղաքականության նկատմամբ: Մյուս կողմից, ուսանողները գտնում են, որ երկաստիճան կրթական համակարգը ընդամենը երկարացնում է ուսման տևողությունը: Սա մատնանշում է, որ դեռևս զգալի աշխատանքներ պետք է կատարվեն մագիստրատուրայի ուսումնական պլանների և ծրագրերի մշակման գործում՝ դրանց պահանջված խորությունն ապահովելու նպատակով: Հակառակ դեպքում, ուսանողների մոտ կշարունակվի մնալ այն թյուր տպավորությունը, որ մագիստրատուրան դա ուղղակի ուսման տևողության արհեստական երկարացում է:

Եզրակացություն

Ներկա պայմաններում կրթությունը մասնավորապես բարձրագույն կրթությունը, դարձել է շատ կարևոր ապրանք ամբողջ աշխարհում: GATS-ի նեո-լիբերալ մոտեցման համաձայն՝ բարձրագույն կրթությունը, որը օրենքով ամրագրված է որպես ազգային տնտեսությունների քաղաքացիների իրավունք, վերասահմանվել և փոխակերպվել է այնպիսի միջազգային ապրանքի, որը կարող է գնվել և վաճառվել ցանկացած միջազգային ազդյունքից:

Այս համատեքստում առանձին երկրներ փորձում են ներգրավել որքան հնարավոր է շատ ուսանողներ (մակրոմակարդակ): Մյուս կողմից այս հիմնախնդիրը առկա է առանձին երկրների ԲՈՒՀ-երի միջև (միկրոմակարդակ): Այդ պատճառով Բոլոնիայի գործընթացի քննարկումներում բազմիցս նշվել է, որ եվրոպական բարձրագույն կրթական համակարգի և համալսարանների կողմից տրամադրվող կրթական աստիճանների տարբերությունն այն հիմնական պատճառներից մեկն է, որը խոչընդոտում է օտարերկրյա ուսանողների ներգրավման գործընթացին:

Եվրոպայում բարձրագույն կրթությունը երկար ժամանակ համարվել է հանրային ապրանք/ծառայություն, որը տրամադրվում էր կառավարության կամ այլ պետական կառավարման մարմինների կողմից: Արևմտյան Եվրոպայում (օրինակ Գերմանիայում, Պորտուգալիայում, Իտալիայում և այլն) բարձրագույն կրթության մասնավոր ինստիտուտները լայն թափով սկսեցին տարածվել և զարգանալ 1990-ական թվականների վերջին: Բարձրագույն կրթության մասնավոր ինստիտուտներից շատերը կենտրոնացան այնպիսի ոլորտների վրա, ինչպիսիք են՝ գործարարությունը, կառավարումը/վարչարարությունը և իրավունքը:

ԵՄ կրթական համակարգի առաջնայնությունները փոխկապակցված են ներքին շուկայի արդյունավետության բարձրացման հետ: Աշխատուժի շարժունությանն օժանդակելու համար շատ կարևոր է նպաստել ուսանողների շարժունությանը: Կրեդիտների և աստիճանների փոխադարձ ճանաչման համակարգը կոչված է ուղղակիորեն նպաստելու աշխատուժի շարժունությանը:

Բոլոնիայի գործընթացի և ԱՀԿ շրջանակներում բարձրագույն կրթության կարգավորման գործում դեռևս առկա է զգալի անջրպետ, քանի որ Բոլոնիայի գործընթացը իրականացվում է անդամ երկրների վերահսկողությամբ, իսկ ԱՀԿ կարգավորումներն այդ ոլորտում՝ միմիայն Եվրոպական հանձնաժողովի:

1990-ական թթ. վերջերին բարձրացվեց եվրոպական կրթական համակարգի գլոբալ մրցունակության ապահովման հիմնախնդիրը, քանի որ չնայած

ներելրոպական շարժունության բավական բարձր մակարդակի՝ բավական ցածր էր Եվրոպայից դուրս շարժունության մակարդակը: Այդ պատճառով 1998թ. չորս երկրների (Մեծ Բրիտանիա, Գերմանիա, Ֆրանսիա և Իտալիա) կրթության նախարարները Փարիզում հանդիպեցին՝ քննարկելու աստիճանների կառուցվածքի ներդաշնակեցման հնարավորությունը (Փարիզի հռչակագիր): Այս նախաձեռնությունն էլ հենց հիմք հանդիսացավ Բոլոնիայի գործընթացի զարգացման համար: Բոլոնիայի հռչակագրի հիմնական նպատակն է ուժեղացնել եվրոպական բարձրագույն կրթության դերը համաշխարհային կրթական շուկայում:

2004թ. մայիսի 18-ին Ստրասբուրգում Հարավային Կովկասի (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) բարձրագույն կրթության նախարարները իրենց ցանկությունը արտահայտեցին՝ անդամակցելու Բոլոնիայի գործընթացին: Բարեփոխումները բարձրագույն կրթության ոլորտում կազմում են անդամակցության գործընթացի կարևորագույն մասը: Նախարարները պարտավորվեցին ընդունել բարձրագույն կրթության նոր օրենսդրություն, որը կհամապատասխանի եվրոպական նորմերին ու ստանդարտներին և, ելնելով Բոլոնիայի գործընթացի պահանջներից, կատարել բարեփոխումներ բարձրագույն կրթության ոլորտում: Արդյունքում 2005թ. Հայաստանն անդամակցեց Բոլոնիայի գործընթացին:

Հարցման արդյունքների վերլուծումից և ամփոփումից հետո կարելի է կատարել հետևյալ եզրակացությունները.

- Ուսանողների կողմից ստացվող վարձավճարները ԲՈՒՀ-երի գործունեության ֆինանսավորման գործում պետք է հանդիսանան միայն լրացուցիչ աղբյուր, այն դեպքում, երբ Հայաստանում դրանք ընդհանուր առմամբ հանդիսանում են որպես հիմնական աղբյուր:
- Ուսանողները բուհական համակարգի զարգացման գործում շարունակում են մեծ դերակատարում տալ պետության դերին, չնայած նրանց մեծամասնությունը գտնում է որ ԲՈՒՀ-երը պետք է ազատ լինեն իրենց քաղաքականության սահմանման գործում: Այսպես, պետությունը պետք է ԲՈՒՀ-ական համակարգի կարգավորման գործում «պասիվ» դեր կատարի, այսինքն՝ ստեղծի «խաղի կանոններ» ԲՈՒՀ-երի համար, իսկ ԲՈՒՀ-երի զարգացման ռազմավարությունը պետք է որոշվի ԲՈՒՀ-երի կողմից:
- ԲՈՒՀ-երը պետք է ինքնուրույն որոշեն ուսումնական ծրագրերի բովանդակությունը, ավարտական պահանջները և ուսանողների ընտրության քաղաքականությունը, սակայն ԲՈՒՀ-երին չպետք է ազատություն տրվի ուսման

վարձավճարների որոշման գործընթացում: Միգուցե ուսանողները գտնում են, որ պետության միջամտությունն ու կարգավորումն այստեղ անհրաժեշտ է, քանի որ նրանք մտավախություն ունեն, որ ուսման վարձավճաները սահմանելիս ԲՈՒՀ-երը կարող են անհիմն բարձր գներ սահմանել:

- Չնայած այն հանգամանքին, որ ընդհանուր առմամբ ուսանողները ըմբռնում են Բոլոնիայի գործընթացի հիմնական նպատակները, ուսանողների մեծամասնությունը կարծում է, որ շատ ավելի լավ կլիներ, եթե հին կրթական համակարգը պահպանվեր (առանց բակալավրիատ և մագիստրատուրա տարանջատման): Հնարավոր է, որ այս մոտեցումը փոփոխությունների նկատմամբ մարդկանց զգուշության արդյունք է: Ամեն դեպքում, մեր կարծիքով, յուրաքանչյուր համալսարան պետք է աշխատանքներ կատարի այս ոլորտում, որպեսզի և՛ բակալավրիատում (հետագայում առանց մագիստրատուրայի), և՛ մագիստրատուրայում սովորող ուսանողները կարողանան ավելի հստակ պատկերացնել փոփոխությունների անհրաժեշտությունը և դրանց դրական կողմերը:
- Ուսանողների 1/3 կարծում է, որ մագիստրատուրան նախապայման է հանդիսանում լրիվ բարձրագույն կրթություն ունենալու համար: Մինչդեռ Բոլոնիայի գործընթացի համաձայն բակալավրիատը համարվում է լրիվ բարձրագույն կրթություն: Այստեղ հարկ է նշել, որ միևնույն մոտեցումը առկա է նաև աշխատուժի շուկայում, ուստի ուսանողների նման մոտեցումն ուղղակի արձագանք է գործատուների կողմից տարվող քաղաքականության նկատմամբ: Մյուս կողմից, ուսանողները գնտում են, որ երկաստիճան կրթական համակարգը ընդամենը երկարացնում է ուսման տևողությունը: Սա մատնանշում է, որ դեռևս զգալի աշխատանքներ պետք է կատարվեն մագիստրատուրայի ուսումնական պլանների և ծրագրերի մշակման գործում՝ դրանց պահանջված խորությունն ապահովելու նպատակով: Հակառակ դեպքում, ուսանողների մոտ կշարունակվի մնալ այն թյուր տպավորությունը, որ մագիստրատուրան դա ուղղակի ուսման տևողության արհեստական երկարացում է:

Հավելված

Աղյուսակ 1 ա: Բոլոնիայի գործընթաց

Բոլոնիայի հռչակագիր 1999թ.
1. Ընդունել «ոլորընթեռնելի և համեմատելի» կրթական աստիճանների համակարգ
2. Կիրառել երկու անկախ փուլերի վրա հիմնված կրթական աստիճանի համակարգ
3. Հիմնադրել կրեդիտային համակարգ
4. Նպաստել ուսանողների շարժունությանը
5. Խթանել համագործակցությունը որակի ապահովման գործընթացում
6. Նպաստել բարձրագույն կրթության եվրոպական ուղղվածությանը
Պրահայի կոմյունիկե 2001թ.
7. Հարատև կրթություն
8. Բարձրագույն կրթության ինստիտուտներ և ուսանողներ
9. Խթանել բարձրագույն կրթության եվրոպական տարածքի գրավչությանը
Բեռլինի կոմյունիկե 2003
10. Բարձրագույն կրթության և գիտահետազոտական համակարգերի միջև կապերի սերտացում
-Բարձրագույն կրթության քաղաքականության սոցիալական ուղղվածություն

Աղյուսակ 1 բ: Բոլոնիայի գործընթացի միջնաժամկետ առաջնային գործողությունները Բեռլինի կոմյունիկեում 2003թ.

Որակի ապահովում
-մշակել փոխադարձ համաձայնեցված չափանիշներ և մեթոդոլոգիա
Երկու փուլերի վրա հիմնված կրթական աստիճանի համակարգ
Կրթական աստիճանների և ուսման ժամանակահատվածի ճանաչում
-Լիսաբոնի ճանաչման Համաձայնագիրը պետք է հաստատվի Բոլոնիայի գործընթացին մասնակցող բոլոր երկրների կողմից: 2005թ. յուրաքանչյուր ուսանող ավարտելով պետք է ինքնաբերաբար անվճար ստանա Դիպլոմի միջուկ:

**Աղյուսակ 1 գ: Բոլոնիայի գործընթացի առաջնային գործողությունները
Բերգենի կոմյունիկեում 2005թ.**

Որակի ապահովում
-Գրեթե բոլոր երկրները միջոցառումներ են ձեռնարկել որակի ապահովման համակարգի համար՝ ելնելով Բեռլինի կոմյունիկեի չափանիշից:
Երկու փուլերի վրա հիմնված կրթական աստիճանի համակարգ
-երկաստիճան կրթական համակարգը լայնորեն կիրառվում է շատ երկրներում և ուսանողների ավելի քան կեսն արդեն ներառված են այդ համակարգում:
Կրթական աստիճանների և ուսման ժամանակահատվածի ճանաչում
-Բոլոնիայի գործընթացի 45 մասնակից երկրներից 36 արդեն հաստատել են Լիսաբոնի ճանաչման Համաձայնագիրը

Աղյուսակ 2 : Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրները

	Սորբոն 1998	Բոլոնիա 1999	Պրահա 2001	Բեռլին 2003	Բերգեն 2005
Մասնակից երկրների քանակ	4	29	33	40	45
Երկրներ	Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա, Մեծ Բրիտանիա	+ Ավստրիա, Բելգիա, Չեխիա, Բուլղարիա, Գանիա, Էստոնիա, Ֆինլանդիա, Հունաստան, Հունգարիա, Իսլանդիա, Իռլանդիա, Լատվիա, Լիտվա, Լյուքսեմբուրգ, Մալթա, Նիդեռլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Պորտուգալիա, Ռումինա, Սլովենիա, Սլովակիա, Իսպանիա, Շվեդիա, Շվեյցարիա	+Խորվաթիա, Լիպրոս, Թուրքիա,	+Ալբանիա, Անդորրա, Բոսնիա և Հերցեգովինա, Ռուսաստան, Սերբիա, Մակեդոնիա, Վատիկան	+ Հայաստան, Ադրբեջան, Վրաստան, Մոլդովա

ՀԱՐՑԱԹԵՐԹ

ՀՀ բարձրագույն կրթական համակարգը և Բոլոնիայի գործընթացը

Լրացման ամսաթիվը

Օր

Ամիս

Տարի

ԲՈՒՀ-ի անվանումը և
ֆակուլտետը

Լրացնող
(ըստ ցանկության)

(Ազգանուն, անուն, սյաշտուն)

Հարցաթերթը լրացվում է Եվրոպական իրավունքի և ինտեգրման կենտրոնի կողմից իրականացվող «Եվրոպական բարձրագույն կրթական համակարգի ինտեգրումը և Հայաստանի մասնակցությունն այդ գործընթացներին» թեմայով գիտահետազոտական աշխատանքների շրջանակներում:

**ԲԱԺԻՆ Ա - ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՐՑՄԱՆ ՄԱՍՆԱԿՑԻ
ՄԱՍԻՆ**

1. Նշեք Ձեր տարիքը՝ ընտրելով համապատասխան միջակայքը	
1.1 16 – 20	<input type="checkbox"/>
1.2 21 – 25	<input type="checkbox"/>
1.3 26 և ավելի	<input type="checkbox"/>
2. Նշեք Ձեր սեռը՝	
2.1 Արական	<input type="checkbox"/>
2.2 Իգական	<input type="checkbox"/>
3. Նշեք Ձեր քաղաքացիությունը /երկիրը/	
3.1 Հայաստան	<input type="checkbox"/>
3.2 Վրաստան	<input type="checkbox"/>
3.3 Ռուսաստան	<input type="checkbox"/>
3.4 Այլ /նշել/	<input type="text"/>
4. ԲՈՒՀ-ի տիպը	
4.1 Պետական	<input type="checkbox"/>
4.2 Մասնավոր	<input type="checkbox"/>
5. Ինչպիսի կրթական ծրագրում եք Դուք ներկայումս սովորում	
5.1 Բակալավրիատ	<input type="checkbox"/>
5.2 Մագիստրատուրա	<input type="checkbox"/>
5.3 Հնգամյա դիպլոմավորված մասնագետի ծրագիր	<input type="checkbox"/>
5.4 Այլ /նշել/	<input type="text"/>
6. Ով է վճարում Ձեր ուսուցման համար	
6.1 Մովորում եմ պետական պատվերով	<input type="checkbox"/>
6.2 Ծնողներս	<input type="checkbox"/>
6.3 Ծնողներիս գործատուներից որևիցե մեկը	<input type="checkbox"/>
6.4 Այլ /նշել/	<input type="text"/>
7. Որքան եք տարեկան վճարում Ձեր ուսուցման համար	
7.1 մինչև 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (331,800 դրամ)	<input type="checkbox"/>
7.2 1000-1500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (331,800-497,700 դրամ)	<input type="checkbox"/>
7.3 1500 – 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (497,700- 663,600 դրամ)	<input type="checkbox"/>
7.4 2000 և ավելի ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (663.600 և ավելի դրամ)	<input type="checkbox"/>

ԲԱԺԻՆ Բ - ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ԲՆՈՒԹԱԳԻՐ

8. Ըստ Ձեզ, որն է այն հիմնական գործոնը, որը դարձնում է ՀՀ բարձրագույն կրթական համակարգը մրցունակ այլ երկրների հետ համեմատած /նշել մեկ գործոն/

- 8.1 Կրթության ցածր գինը
- 8.2 Գիտելիքների բարձր որակը
- 8.3 Բարձրագույն կրթական համակարգը մրցունակ չէ
- 8.4 Այլ /նշել/

9. Ըստ Ձեզ, առկա է արդյոք մրցակցություն ՀՀ ԲՈՒՀ-երի միջև

- 9.1 Այո
- 9.2 Ոչ
- 9.3 Դժվարանում եմ պատասխանել

10. Ինչպիսի դեր պետք է ունենան Ձեր կարծիքով ուսանողների կողմից ստացվող վարձավճարները ԲՈՒՀ-երի գործունեության ֆինանսավորման գործում

- 10.1 Վարձավճարները պետք է հանդիսանան ԲՈՒՀ-երի ֆինանսավորման հիմնական աղբյուրը
- 10.2 Վարձավճարները պետք է հանդիսանան ԲՈՒՀ-երի ֆինանսավորման ընդամենը լրացուցիչ աղբյուր, հիմնական մասը պետք է ֆինանսավորվի պետության և այլ ներքին ու արտաքին աղբյուրների կողմից

11. Ձեր կարծիքով ինչպիսին պետք է լինի պետության դերը ԲՈՒՀ-ական համակարգի կարգավորման գործում

- 11.1 Պետությունը պետք է հստակորեն սահմանի բարձրագույն կրթության չափորոշիչները և սահմանի ԲՈՒՀ-երի զարգացման ռազմավարությունը
- 11.2 Պետությունը պետք է ստեղծի ընդհանուր «խաղի կանոններ» ԲՈՒՀ-երի համար, իսկ իր ռազմավարությունը պետք է որոշի յուրաքանչյուր ԲՈՒՀ

12. Ձեր կարծիքով ԲՈՒՀ-երին պետք է ազատություն տրվի հետևյալ ոլորտներում

- | | Այո | Ոչ |
|---|----------------------|----------------------|
| 12.1 Ուսանողների ընտրության քաղաքականության որոշում | <input type="text"/> | <input type="text"/> |
| 12.2 Բացարձակապես ինքնուրույն որոշել ուսման վարձերի մեծությունը | <input type="text"/> | <input type="text"/> |
| 12.3 Որոշել մասնագիտությունների ավարտական պահանջները | <input type="text"/> | <input type="text"/> |
| 12.4 Մշակել ուսումնական ծրագրեր | <input type="text"/> | <input type="text"/> |

ԲԱԺԻՆ Գ - ԲՈՒՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ՈՒՍԱՆՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ

13. Առաջին հերթին ինչ եք մտաբերում «Բոլոնիայի գործընթաց» բառակապակցությանը հանդիպելիս /նշել մեկ տարբերակ/

- 13.1 Բարձրագույն կրթության համակարգի բարեփոխումներ
- 13.2 Կրթության համակարգի Եվրոպականացում
- 13.3 Անցում դեպի կրեդիտային համակարգ
- 13.4 Ուսանողների չվերաբերվող գործընթաց՝ պետության մակարդակով
- 13.5 Այլ /նշել/

14. Կցանկանայիք արդյոք, որ հին կրթական համակարգը (առանց բակալավրիատ և մագիստրատուրա տարանջատման) պահպանվեր

- 14.1 Այո
- 14.2 Ոչ
- 14.3 Դժվարանում եմ պատասխանել

15. Որոնք են Ձեր կարծիքով երկաստիճան կրթական համակարգի ներմուծման հիմնական նպատակները /կարող եք նշել մի քանի տարբերակ/

- 15.1 Ուսման որակի բարձրացում
- 15.2 Անցում դեպի կրեդիտային համակարգ
- 15.3 Աշխատուժի շուկայի պահանջներին հարմարեցում
- 15.4 Ուսման տևողության երկարացում /4+2 նախկին 5-ի փոխարեն/
- 15.5 Մոտեցում Եվրոպական համակարգին
- 15.6 Այլ /նշել/

16. Որն է Ձեր կարծիքով կրեդիտային համակարգի հիմնական նպատակն է

- 16.1 Բարձրացնել կրթական համակարգի մատչելիությունը
- 16.2 Խթանել ուսանողների շարժունությանը
- 16.3 Նպաստել ուսանողների ուսուցման ճկունությանը
- 16.4 Տարբեր երկրներում ուսումնական ծրագրերը համեմատելի դարձնելը
- 16.5 Այլ /նշել/

17. Ձեր կարծիքով բակալավրիատը համարվում է լրիվ բարձրագույն կրթություն

- 17.1 Այո
- 17.2 Ոչ
- 17.3 Դժվարանում եմ պատասխանել

18. Մագիստրատուրան հնարավորություն է տալիս / կարող եք նշել մի քանի տարբերակ/

- 18.1 Ավելի խորացնել բակալավրիատում ստացված գիտելիքները՝ ավելի շատ շեշտադրելով գիտահեզոտական աշխատանքը

18.2 Խորացնել մասնագիտացման աստիճանը	<input type="text"/>
18.3 Նախապայման է լրիվ բարձրագույն կրթություն ունենալու համար	<input type="text"/>
18.4 Դժվարանում եմ պատասխանել	<input type="text"/>
19. Ձեր կարծիքով ԲՈՒՀ-երի գործունեության և մասնավորապես՝ դասավանդման որակի համար, ովքեր են պատասխանատու /նշել մեկ տարբերակ/	
19.1 Հատուկ պետական մարմինները, որոնք պետք է ստեղծվեն որակի վերահսկման համար	<input type="text"/>
19.2 ԲՈՒՀ-երը	<input type="text"/>
19.3 Անկախ մարմիններ /ոչ պետական/, որոնք ստեղծվում են այդ նպատակով	<input type="text"/>
19.4 Դժվարանում եմ պատասխանել	<input type="text"/>
20. Ձեր կարծիքով ՀՀ կրթության ոլորտում անհրաժեշտ է	
20.1 Անցնել եվրոպական որակի ստանդարտների	<input type="text"/>
20.2 Մշակել և կիրառել սեփական ստանդարտներ	<input type="text"/>
20.3 Դժվարանում եմ պատասխանել	<input type="text"/>
21. Որքան եք պատրաստ ավելի վճարել առավել որակյալ կրթություն ստանալու համար /ավել քան ներկայումս վճարում եք/	
21.1 Պատրաստ չեմ վճարել	<input type="text"/>
21.2 Մինչև 1000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (331,800 դրամ)	<input type="text"/>
21.3 1000-1500 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (331,800-497,700 դրամ)	<input type="text"/>
21.4 1500 – 2000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (497,700- 663,600 դրամ)	<input type="text"/>
21.5 2000 և ավելի ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (663.600 և ավելի դրամ)	<input type="text"/>
22. Ձեր կարծիքով, ներկայումս ԲՈՒՀ-երը հաշվի են առնում աշխատուժի շուկայի կողմից մասնագետների գիտելիքների նկատմամբ պահանջներ, եթե այո ապա որքանով	
22.1 Հաշվի չեն առնում	<input type="text"/>
22.2 Հաշվի են առնում շատ սահմանափակ ձևով	<input type="text"/>
22.3 Մեծապես հաշվի են առնում	<input type="text"/>
22.4 Ամբողջովին հասկանում են ներկայիս և պոտենցիալ իրավիճակը ու ամբողջությամբ հաշվի են առնում	<input type="text"/>
23. Երբևէ սովորել եք արտասահմանում /1 ամիս և ավելի/	
23.1 Այո	<input type="text"/>
23.2 Ոչ /անցեք Հարց 26-ին/	<input type="text"/>
24. Ինչ ծրագրով եք սովորել արտասահմանում	
24.1 Նշեք անվանումը	<input type="text"/>
24.2 Միջբուհական համաձայնագրի հիման վրա	<input type="text"/>
24.3 Անհատական նախաձեռնությամբ	<input type="text"/>

25. Ով է ֆինանսավորել ձեր ուսումն արտասահմանում /ուսուցումը և ապրելու ծախսերը/

- 25.1 Ինքնուրույն, սեփական միջոցներով
- 25.2 Ընդունող կողմի ֆինանսավորմամբ
- 25.3 Երրորդ կողմից ստացված դրամաշնորհով
- 25.4 Այլ /նշել/

26. Ինչպիսի գործոններ են, բացի ֆինանսական միջոցներից, մեծապես դժվարեցնում արտասահմանում սովորելու գործընթացը /կարող եք նշել մի քանի տարբերակ/

- 26.1 Մեծածավալ թղթաբանությունը
- 26.2 Արտասահմանում ստացած կրթությունը չի ընդունվում Հայաստանում
- 26.3 Օտար լեզվի իմացության անբավարար մակարդակը
- 26.4 ԲՈՒՀ-ում տարկետում ստանալու հետ կապված խնդիրները
- 26.5 Փոխանակման ծրագրերի վերաբերյալ ԲՈՒՀ-ում տարածվող տեղեկատվության պակասը
- 26.6 Այլ /նշել/

27. Արտասահմանում սովորելու համար ինչպիսի գործոն մեծապես կազդի ձեր կողմից երկրի ընտրության վրա

- 27.1 Լեզուն
- 27.2 Ուսման վճարը
- 27.3 Ապրելու գինը
- 27.4 Ուսման որակը
- 27.5 Այլ /նշել/

28. Տեղյակ եք արդյոք ուսանողներին տրամադրվող դրամաշնորհների մասին

- 28.1 Այո՛, պատրաստվում են դիմել,
- 28.2 Այո՛, արդեն դիմել եմ
- 28.3 Ո՛չ, չեմ հետաքրքրվում,
- 28.4 Ո՛չ, չունեմ որևէ տեղեկություն՝ տեղեկատվության բացակայության պատճառով

Շնորհակալություն հարցմանը մասնակցելու համար:

Օգտագործված գրականություն

1. Alesi, B., S. Burger, B. Kehm and U. Teichler (2005), Bachelor and Master Courses in Selected Countries Compared with Germany, Federal Ministry of Education and Research, Bonn/Berlin.
2. “An International Strategy For Higher Education” (2003), Finland Ministry of Education.
3. Bleiklie, I. (2005). “Organising higher education in a knowledge society.” Higher Education 49: 31-59.
4. “Bologna Process” Template for National Reports (Armenia): 2005-2007
5. European Network of Information Centers, ENIC/ National Academic Recognition Information Centres, NARIC
6. Gornitzka, A. and J.P. Olsen (2006). “Making Sense of Change in University Governance”, Oslo, ARENA Working Paper 02/2006.
7. From Berlin to Bergen, General Report Oslo, 2005
8. From Bergen to London: contribution of the council of europe to the bologna process, Strasbourg, 2007
9. A. Corbett (2006) “Higher Education as a Form of European Integration”, ARENA Papers
10. Huisman, J. and M.C. van der Wende (eds) (2004) “On Cooperation and Competition. National and European Policies for Internationalization of Higher Education. ACA Papers on International Cooperation, Lemmens, Bonn
11. Krzysztof Pawlowski (2004) “Rediscovering higher education in Europe”, Studies on Higher Education.
12. Implications of the Bologna Process for Planning Education in Europe, Oxford Brookes university, 2006
13. Lub, A., M.C. van der Wende and J. Witte (2003), .The Implementation of the Bachelor-master System in Germany and the Netherlands., TEAM, Vol. 9, pp. 249-266.
14. Musselin, C. (2005). “Change and Continuity in Higher Education Governance.”
15. Nerses Gevorgyan (2004) “Towards the european higher education area: Bologna Process”, Reports From New Members of The Bologna Process.
16. OECD, Education at a Glance 2007

17. “Perceptions of Higher Education Reforms” European Commission, 2007
18. P. Maassen (2006) “The Modernisation of European Higher Education: A multi-level analysis” Helsinki
19. Sklair, L. (2001) “The Transnational Capitalist Class”, Oxford: Blackwell
20. Simin Davoudi, Paul Ellison (2006) “Implications of the Bologna Process for Planning Education in Europe”, Oxford Brookes University
21. Simon Marginson Marijk van der Wende (2007) “Globalisation and Higher Education”, OECD
22. “Towards the European higher education area: Bologna Process” National Report, Armenia 2005
23. “The Bologna Process: Student Plans and Perceptions”, A Survey by EFMD and trendecne, 2006
24. Wissenschaftsrecht (2000) “The Myth of the Dutch Middle Way” vol.33, p.189-209.
25. Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն

Ինտերնետային կայքեր

26. www.cbs.nl/nl-NL/menu/themas/macro-economie-financiele-instellingen/nationale-rekeningen/publicaties/artikelen/2005-1798-wm.htm-Նիդերլանդների իրավիճակը բարձրագույն կրթության ոլորտում
27. www.etuc.org/a/652- Եվրոպական Միության Լիսաբոնի ռազմավարություն
28. www.magna-charta.org - The Magna Charta Universitatum signed in Bologna in 1988
29. www.esib.org/wg/education/ECTSSurvey.htm-ECTS-ի իրական կարգավիճակը
30. www.tempus.am -National Tempus Office in Armenia